

ԵՐԲ ԿՈՐՑՆՈՒՄ ԵՆ ՃԱՆԱՊԱՐՅՈՒՆՆԵՐ՝ ՄՆՈՒՄ Ե ԱՌԱՔԻՆՈՒԹՅՈՒՆԸ, ԵՐԲ ԿՈՐՑՆՈՒՄ ԵՆ ԲԱՐՈՑԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՄՆՈՒՄ Ե ՕՐԵՆՔԸ, ԵՐԲ ԿՈՐՑՆՈՒՄ ԵՆ ՕՐԵՆՔԸ, ՄՆՈՒՄ Ե ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ: ԻՍԿ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՈՑԱԿԱՆԻ ԱՐՏԱՔԻՆՆ Ե ՄԻԱՅՆ ԵՎ ՆՐԱՆԻՑ ՍԿՍԿՈՒՄ Ե ԱՅԼԱՍԵՐՈՒՄԸ... ԱՍԵԼ Ե՛Ն ՆԱԽ ՃԱՆԱՊԱՐՅՈՒՆ: **ՃԱՆԱՊԱՐՅՈՒՆՆԵՐ՝ ԱՆՁԸ:**

Կ.ԶԱՐՅԱՆ

Այսօր շատ է խոսվում երկրորդ սերնդի բարեփոխումների իրականացման անհրաժեշտության մասին, դրանց կարիքն ունեն և դրանց սպասում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիները: Երկրորդ սերնդի բարեփոխումներ ասելով պետք է հասկանալ երկրի պետական համակարգում կոռուպցիոն ու հովանավորչական ռիսկերի կտրուկ նվազեցում և տնտեսության բնագավառում առողջ մրցակցային միջավայրի ապահովում: Սրանք այն հիմնական և անհապաղ քայլերն են, որոնց իրականացմանը սպասում է մեր հասարակության սովոր զանգվածը: Երկրորդ սերնդի բարեփոխումների համատեքստում առավել կարևորվում է դատաիրավական բարեփոխումների իրականացումը: Այս առումով ամենամեծ խնդիրը ներկայումս դատարանների իրական անկախության ապահովումն է, անկախություն, որի շնորհիվ է միայն հնարավոր իրականացնել արդարադատությունը: Իսկ արդարադատության իրականացումն էլ հնարավոր կդարձնի ապահովել քաղաքացիների իրավունքների պաշտպանությունը, այդ թվում՝ խախտված իրավունքների վերականգնումը: Եվ այս առումով սխալված չենք լինի կրկին իրականացնել ԵՐԿՐՈՐԴ ՍԵՐՆԴԻ ԲԱՐԵՓՈՒՄՈՒՄՆԵՐ, և այդ բարեփոխումների իրականացումը սկսել ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՑ:



ԼՐԱՅՈՒ

ՀԱՄԱՐԻ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐԸ

Իրավաբանական լրատուն հարցազրույցներ է անցկացրել է Ռուս-հայկական (Սլավոնական) պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի դեկան Կարեն Կարենյանի և նախկին դատավոր Պարզև Օհանյանի հետ: Հարցազրույցները համալսարանի կայքում:

ԱՌԱՋԻՆ ԿԻՆ ԱՑ ՓՈՒՆՆԱԽԱԳԱՅԸ

2007թ.-ի նոյեմբերի 12-ի նիստում ՀՀ Ազգային ժողովի փոխնախագահ է ընտրվել իրավաբան Արևիկ Պետրոսյանը, ով մինչ այդ զբաղեցնում էր Ազգային ժողովի մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնը: «Իրավաբանական լրատուն» շնորհավորում է Արևիկ Պետրոսյանին այդ բարձր պաշտոնում ընտրվելու կապակցությամբ և մաղթում բեղմնավոր աշխատանք:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԱՆՍ

2007թ.-ի հոկտեմբերի 25-26-ին Իսպանիայի Լանսարոտա քաղաքում տեղի է ունեցել Եվրոմիության երկրների Արդարադատության նախարարների 28-րդ երկօրյա կոնֆերանսը: Կոնֆերանսին մասնակցել և զեկույցով հանդես է եկել ՀՀ արդարադատության նախարար Գևորգ Դանիելյանը: Կոնֆերանսը նախագահում էր Իսպանիայի արդարադատության նախարարը, իսկ նրա երկու տեղակալներն էին Հայաստանի և Բուլղարիայի արդարադատության նախարարները: Կոնֆերանսը նվիրված էր փախստականների և դժվար համարվող երեխաների իրավունքներին: Միջոցառման ընթացքում քննարկվել է վերոհիշյալ անձանց իրավունքների պաշտպանության օպտիմալ տարբերակներ գտնելու հարցը:

ԿՈՐՐԻՆԱՑԻՈՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍ

2007թ.-ի հոկտեմբերի 9-ին Երևանում տեղի ունեցավ ԱՊՀ անդամ-պետությունների գլխավոր դատախազների կոորդինացիոն խորհրդի նիստ, որին մասնակցել են Բելոռուսի, Ղազախստանի, Տաջիկստանի, Ղրղզստանի, Մոլդովայի, Ուկրաինայի, Թուրքմենստանի, Ռուսաստանի Դաշնության և Վրաստանի դատախազությունների պատվիրակությունները:

ԵՐԵՎԱՆՅԱՆ XII ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

2007թ.-ի հոկտեմբերի 5-6-ին Երևանում տեղի ունեցավ «Մարդու իրավունքների ապահովման և պաշտպանության բնագավառում սահմանադրական դատարանների և մարդու իրավունքների պաշտպանների համագործակցության միջազգային փորձը» թեմայով Երևանյան XII միջազգային խորհրդաժողովը, որին մասնակցում էին Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախագահ Ժան-Պոլ Կոստան, Օմբուդսմենի միջազգային ինստիտուտի եվրոպական տարածքային նախագահ Պ.Կոստելյան, պատվիրակներ աշխարհի 30 երկրներից:

Երկօրյա նիստերին «Սահմանադրական արդարադատության մարմինների և մարդու իրավունքների պաշտպանի համագործակցության փորձը մարդու իրավունքների ապահովման և պաշտպանության բնագավառում» թեմայով զեկույցումներ կարդացին Նիդեռլանդների, Իսպանիայի, Բելգիայի, Լեհաստանի, Ռուսաստանի Դաշնության, Ռումինիայի, Լատվիայի, Լիտվայի, Մոլդովիայի, Հունգարիայի, Բուլղարիայի, Հայաստանի, Մակեդոնիայի, Վրաստանի, Սլովակիայի, Բելոռուսի, Ղրղզստանի, Եվրոպայի, Անդորրայի, Ալբանիայի, Բոսնիա-Հերցեգովինայի, Չեխիայի, Կիպրոսի, Պորտուգալիայի, Էստոնիայի ՄԳ նախագահներ, օմբուդսմեններ, ՄԳ դատավորներ:

ԻՐԱՋԵՎՈՒՄ

Հարգելի ընթերցողներ, կազմակերպական նպատակահարմարության նկատառումներից ելնելով՝ «Իրավաբանական լրատուն»-ն 2007թ.-ի հունիս-նոյեմբեր ժամանակահատվածի համար հրատարակում է մեկ միասնական ծավալուն համար: Լրատուն հայցում է իր ընթերցողների ներդրամությունը և տեղեկացնում, որ 2007թ.-ի դեկտեմբերից սկսած, «Իրավաբանական լրատուն»-ն նախկինի պես կիրառարանակալի ամենամսյա պարբերականությամբ:

ԱՄՆ ՀԱՅ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՊԱՏՎՈՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՅՑԸ ՀԱՅԱՍՏԱՆ

ԱՄՆ հայ իրավաբանների միության անդամների տարեմիջյան հանդիպումը անցկացվեց Փարիզում և Երևանում սույն թվականի սեպտեմբերի 27-ից հոկտեմբերի 7-ը: Երևանում ԱՄՆ հայ իրավաբանների միության անդամները որպես դատավոր մասնակցեցին նաև հոկտեմբերի 3-ին Հայաստանում ամերիկյան համալսարանի իրավաբանական բաժնի կողմից կազմակերպված դատախազին: Դատախազին հրավիրված էին նաև Ջեսսիկ մրցույթի մասնակիցները և կազմակերպիչները: Դատախազից հետո Ամերիկայի հայ իրավաբանների միության նախկին նախագահ Ռոբերտ Ռուսյանը և նրա տիկինը՝ Մարո Ռուսյանը 2007թ.-ի Ջեսսիկ մրցույթի հայաստանյան մրցավիճակի հաղթող թիմի անդամներին և մրցույթի կազմակերպիչներին հրավիրեցին ընթրիքի, որին ներկա էր նաև Ջոն Մարշալի իրավաբանական դպրոցի պրոֆեսոր Էն Մ. Լուսինը: Ընթրիքի ընթացքում ԱՄՆ հայ իրավաբանների միության անդամների կողմից ողջունվեց Ջեսսիկ մրցույթի կազմակերպումը և հույս հայտնվեց, որ մրցույթի մասնակիցների շրջանակն առաջիկայում ավելի կընդլայնվի:

Սույն թվականի հոկտեմբերի 5-ին տեր և տիկին Ռուսյանները հյուրընկալվեցին Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի կենտրոնական գրասենյակում, որտեղ կայացավ հանդիպում Հայաստանի Ջեսսիկ ակումբի մասնակիցների հետ: Հանդիպման ավարտին պարոն Ռուսյանին շնորհվեց Հայաստանի Ջեսսիկ ակումբի բարեկամի կոչում՝ ի հավաստումն երախտագիտության՝ նախորդ տարիներին Ջեսսիկ մրցույթին աջակցելու համար:



ԿԱՏԱՐՎԵՑ ՄԻ ՇԱՐՔ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ՆՃԱՆԱԿՈՒՄՆԵՐԸ

ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը նոյեմբերի 15-ին հրամանագիր է ստորագրել ՀՀ դատարանների նախագահներ նշանակելու մասին:

Վարդան Աբրահամյանը նշանակվել է Երևանի քրեական դատարանի նախագահ՝ դադարեցնելով Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Ջեյրաբլու համայնքների առաջին ատյանի դատարանի նախագահի լիազորությունները:

Էռնա Հայրիյանը նշանակվել է Երևանի քաղաքացիական դատարանի նախագահ՝ դադարեցնելով Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավորի լիազորությունները:

Արմեն Թումանյանը նշանակվել է Հարավային քրեական դատարանի նախագահ՝ դադարեցնելով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի նախագահի լիազորությունները:

Անատոլի Մաթևոսյանը նշանակվել է Հարավային քաղաքացիական դատարանի նախագահ:

Սերգեյ Չիչոյանը նշանակվել է Հյուսիսային քրեական դատարանի նախագահ՝ դադարեցնելով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի դատարանի նախագահի լիազորությունները:

Սուրեն Անտոնյանը նշանակվել է Հյուսիսային քաղաքացիական դատարանի նախագահ՝ դադարեցնելով Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավորի լիազորությունները:

Մհեր Խաչատրյանը նշանակվել է Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Ջեյրաբլու համայնքների ընդհանուր իրավասության դատարանի նախագահ՝ դադարեցնելով Հայաստանի Հանրապետության Վերաքննիչ քրեական դատարանի նախագահի լիազորությունները:

Տիգրան Սահակյանը նշանակվել է Հայաստանի Հանրապետության Վերաքննիչ քրեական դատարանի նախագահ՝ դադարեցնելով Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահի լիազորությունները:

Դավիթ Ավետիսյանը նշանակվել է Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ՝ դադարեցնելով Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավորի լիազորությունները:

Տիգրան Մուկուչյանը նշանակվել է Հայաստանի Հանրապետության Վարչական դատարանի նախագահ՝ դադարեցնելով Հայաստանի Հանրապետության Վերաքննիչ քաղաքացիական դատարանի նախագահի լիազորությունները:

Էդվարդ Մուրադյանը նշանակվել է Հայաստանի Հանրապետության Վերաքննիչ քաղաքացիական դատարանի նախագահ՝ դադարեցնելով Հայաստանի Հանրապետության Տնտեսական դատարանի նախագահի լիազորությունները:

ՆՃԱՆԱԿՎԵՑԻՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐ

ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի հոկտեմբերի 26-ի հրամանագրերով Արսեն Բաբայանը նշանակվել է Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարանի դատավոր,

Արշակ Պետրոսյանը՝ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի դատավոր:

ԴԱԴԱՐԵՑՎԵՑԻՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐ ՊԱՐԳԵՎ ՕՇԱՆՅԱՆԻ ԵՎ ՎԱԶԳԵՆ ԼԱԼԱՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2007թ.-ի հոկտեմբերի 15-ին ՀՀ Նախագահը ստորագրել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատավոր Պարգև Օհանյանի լիազորությունները դադարեցնելու մասին հրամանագիր: ՀՀ նախագահի կողմից ստորագրված մեկ այլ հրամանագրով դադարեցվել է նաև Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատավոր Վազգեն Լալայանի լիազորությունները:

ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐՏՈՆԱԳԻՐ ԱՏԱՆԱԼՈՒ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ՈՐԱԿՎՈՐՄԱՆ ԸՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՎԱՐՏՎԵՑԻՆ

Փաստաբանական գործունեության արտոնագիր ստանալու որակավորման քննությունների շրջանակում 2007թ.-ի հոկտեմբերի 13-ին 97 փաստաբանի հավակնորդներ մասնակցել են բանավոր քննությանը: Քննատու մար քաղկացած է եղել երեք հարցից, երկու հարցին պատասխանելու դեպքում քննությունը համարվել է հանձնված: Որակավորման հանձնաժողովի նախագահ Ենոք Ազարյանի խոսքով, հանձնաժողովի որոշմամբ այս տարի փաստաբանի վկայագիր կստանա հանրապետության 100 փաստաբան (նրանցից երկուսը դատարանի միջոցով վիճարկել է քննության արդյունքները՝ վերականգնելով քննության անցողիկ շեմը, մեկի քննությունը վերագնահատվել է կազմակերպիչների կողմից, փաստաբանի քննական բալերի հաշվարկը սխալ էր կատարվել կազմակերպիչների պատճառով): Փաստաբանական գործունեության արտոնագիր ստանալու որակավորման քննություններին մասնակցելու համար այս

տարի դիմել էր 235 անձ, մասնակցելու թույլատվություն ստացել էր 215-ը, իսկ օգոստոսի 25-ին կայացած գրավոր քննությանը ներկայացել էր 200 հոգի: Հարյուր բալանոց սանդղակով 85 բալի արգելքը հաղթահարել է 97 հոգի, որոնցից 53-ը՝ քաղաքացիական, իսկ 44-ը՝ քրեական ուղղվածությամբ: Զննության արդյունքները բողոքարկել է 55 անձ: Օգտվելով առիթից՝ Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան շնորհավորում է կազմակերպության անդամներ Արսիմե Եղիկյանին, Արշավիր Խալափյանին, Օհան Գևորգյանին և Գևորգ Գյոզալյանին փաստաբանական գործունեության արտոնագիր ստանալու որակավորման քննությունները հաջողությամբ հանձնելու և փաստաբանի բարձր կոչմանը արժանանալու համար:

ՏԵՐԻ ՈՒՆԵՑԱԿ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԶԵՎՈՒՅՅԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ

2007 թվականի հոկտեմբերի 11-ին Գոուլդեն Թյուլիփ Երևան

հյուրանոցում տեղի ունեցավ Ազգային երիտասարդական զեկույցի շնորհանդեսը: Ընդհանրապես իրավիրված էին ներկայացուցիչներ ՀՀ պետական մարմիններից, միջազգային և տեղական երիտասարդական հասարակական կազմակերպություններից: Ազգային երիտասարդական զեկույցը ստեղծվել է Հայաստանի մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության նախաձեռնությամբ, Եվրոխորհրդի, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի օժանդակությամբ՝ անկախ փորձագետների կողմից: Չեկույցի իրավաբանական բաժնի աշխատանքները ղեկավարել է Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի նախագահ, փաստաբան Կարեն Ջադոյանը: Ընդհանրապես ավարտին ՀՀ սպորտի և երիտասարդության նախարար Արմեն Գրիգորյանը փորձագետներին և աջակիցներին հանձնեց շնորհակալագրեր:

ԵՎՐՈՒՄՈՒՐՐԻ ԿՐԻՄԻՆԱԼ ԻՐԱՎՈՒՆԵՔԻ ԸՆԵՉՆԱԿԱՍԱՐ ԹՈՄԱՍ ՀԱՄԱՐԵՐԳԻ 5-ՕՐՅԱ ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԸՆՅԱՍՍԱՆ



2007թ.-ի հոկտեմբերի 11-ին ավարտվեց Եվրոխորհրդի մարդու իրավունքի հանձնակատար Թոմաս Համարբերգի 5-օրյա առաքելությունը Հայաստանում, որի շրջանակներում Եվրոխորհրդի մարդու իրավունքի հանձնակատարը հանդիպեց ՀՀ քաղաքական ղեկավարության, դատաիրավական համակարգի բարձրաստիճան պաշտոնյաների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ: Պարոն Համարբերգի դիտարկմամբ՝ Հայաստանում իրավական դաշտը շատ մեծ զարգացում է ապրել հատկապես վերջին տարիներին և այժմ՝ բարեփոխումների այս փուլում, անչափ կարևոր է լուրջ ուշադրություն դարձնել օրենքների կիրառմանը:

Մարդու իրավունքների պաշտպանության բնագավառի հետ կապված նա ընդգծել է ազգային համապարփակ փաթեթի ընդունման անհրաժեշտությունը, որն՝ իբրև հայեցակարգ, ամբողջական մտտեցում կցուցաբերի այդ բնագավառի խնդիրներին: Եվրոխորհրդի մարդու իրավունքի հանձնակատարը նաև հայտարարել է, որ Ստրասբուրգ վերադառնալուց հետո կսկսի Հայաստանի մարդու իրավունքի պաշտպանության վիճակի վերաբերյալ զեկույցի նախապատրաստումը:

ԸՆՅԱՍՍԱՆ Է ԺԱՄԱՆԵԼ ՍԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆԵՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԺԱՆ ՊՈԼ ԿՈՍՏԱՆ



2007թ.-ի հոկտեմբերի 4-ին պաշտոնական այցով Հայաստան է ժամանել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախագահ Ժան Պոլ Կոստան: Նա հանդիպումներ կունենա ՀՀ դատական համակարգի բարձրաստիճան պաշտոնյաների հետ, ինչպես նաև կմասնակցի հոկտեմբերի 4-6-ը Երևանում կայանալիք «Մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Սահմանադրական դատարանի և օմբուդսմենի համագործակցության միջազգային փորձը» թեմայով 12-րդ ամենամյա միջազգային համաժողովին: Սպասվում է, որ սույն թվականի հոկտեմբերի երկրորդ կեսին Հայաստան կայցելի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի երրորդ բաժանմունքի նախագահ Բոսյան Ջուլյանչիչը: Այդ նույն բաժանմունքում է ընդգրկված նաև Հայաստանի դատավոր Ալվինա Գյուլումյանը, որտեղ էլ քննվում են Հայաստանից ստացված գործերը:

ԱԼԿԻՆԱ ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆԸ ՎԵՐԸՆՏՐՎԵՑ ՍԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆԵՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴՏԱՐԱՆԻ ԴՏԱՎՈՐ



2007թ.-ի հոկտեմբերի 2-ի ուշ երեկոյան Ստրասբուրգում ձայների մեծամասնությամբ Հայաստանի Հանրապետությունից Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավոր է վերընտրվել Ալվինա Գյուլումյանը: Ընտրությունը, որում քվեարկում են Եվրոդատարանի անդամները, ավարտվել է մեկ փուլով: Բացի դատավոր Ալվինա Գյուլումյանից՝ թեկնածուների թվում էին նաև ՀՀ արդարադատության փոխնախարար, Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ՀՀ ներկայացուցիչ Գևորգ Կոստանյանը և ՀՀ գլխավոր դատախազության միջազգային իրավական վարչության պետ Նելլի Հարությունյանը: Տիկին Գյուլումյանն առաջին անգամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավոր էր ընտրվել 2003թ.-ին: Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան շնորհավորում է տիկին Գյուլումյանին հեղինակավոր դատարանի անդամ վերընտրվելու կապակցությամբ և մաղթում է բեղմնավոր աշխատանք: Միևնույն ժամանակ Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան ՀՀ գլխավոր դատախազության միջազգային իրավական վարչության պետ, ՀԵԻԱ Հայաստանի Ջեսսփի ակումբի անդամ և Ջեսսփի մրցույթի դատավոր Նելլի Հարությունյանին մաղթում է հաջողություն առաջիկայում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավոր ընտրվելու գործում:

ՄԵՆԵ ԼՈՒՋ ԱՍԵԼԻՔ ՈՒ ԱՆԵԼԻՔ ՈՒՆԵՆԵ

ՀԱՄԱՐԻ ՀԱՐՑԱԶԵՐՈՒԹՅՈՒՆ

ԿԱՐԵՆ ՍԱՐԴԱՐՅԱՆ

Ռուս-հայկական (Սլավոնական) պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի դեկան, իրավագիտության թեկնածու



- Պարոն Սարգսյան, ինչպե՞ս կզնահատեք ներկայումս իրավաբանական կրթության վիճակը մեր երկրում և կարո՞ղ եք մատնանշել այն հիմնական խնդիրները, որոնք ներկայումս գոյություն ունեն իրավաբանական կրթական համակարգում, մասնավորապես, Ձեր կողմից դեկավարվող ֆակուլտետում և ըստ Ձեզ, որո՞նք են դրանց լուծման ճանապարհները:

- Խորհրդային Հայաստանում իրավաբանական կրթություն տվող միակ բարձրագույն ուսումնական հաստատությունը ԵՊՀ-ի իրավաբանական ֆակուլտետն էր, որը իր արջև դրված այդ պարտականությունը իրականացնում էր պատշաճ մակարդակով՝ ապահովելով բարձր որակ: Յուրաքանչյուր տարվա կտրվածքով ֆակուլտետի կողմից թողարկվող շրջանավարտների քանակը ապահովում էր հանրապետության այդ տարվա իրավաբան մասնագետների պահանջարկը և զբաղվածության խնդիր գրեթե չէր առաջանում:

Ներկայումս իրավիճակը արմատապես փոխվել է: Գոյություն ունեն իրավաբանական մասնագիտություն ուսուցանող բազմաթիվ բուհեր և ֆակուլտետներ: Ինչպես ցանկացած ոլորտում, այդպես էլ, բնականաբար, իրավաբանական կրթության բնագավառում մրցակցությունը, որպես կանոն, հանդիսանում է դրական գործոն և նպաստում է ուսուցման որակի բարձրացմանը: Սակայն ՀՀ-ում այդ հարցի շուրջ անհրաժեշտ է արտահայտվել որոշ վերապահումով: Բանն այն է, որ ցավոք ոչ բոլոր ուսումնական հաստատություններում է ապահովվում իրավաբանական կրթության ոչ միայն բարձր, այլ նույնիսկ անհրաժեշտ նվազագույն որակը: Բացի այդ լուրջ և, կարելի է ասել, ներկայումս անլուծելի խնդիր է իրավաբանական կրթություն ստացած բոլոր շրջանավարտների համար իրենց մասնագիտությանը համապատասխան աշխատանք գտնելու հարցը:

Այս առումով ապագա ուսանողների համար կենսական կարևորություն է ստանում բուհի ճիշտ ընտրության հարցը: Ըստ ինձ՝ բարձրակարգ իրավաբանական կրթություն տալու համար բուհը պետք է ոչ միայն ունենա համապատասխան լիցենզավորում, այլ նաև համապատասխանի որոշակի չափանիշների: Առաջին հերթին անհրաժեշտ է ընդունելության քննությունների օբյեկտիվ և անաչառ համակարգ, որը կապահովի ապագա ուսանողների որակը: Այնուհետև՝ պետք է ապահովվի պրոֆեսորական դասախոսական անձնակազմի համալրումը համապատասխան գիտական կոչում և աստիճան ունեցող, իրավագիտության բնագավառում իրենց խոսքը ասած, ճանաչում ստացած գիտնականներից: Հաշվի առնելով իրավաբանական բուհերի և համապատասխան գիտնականների

քանակային հարաբերակցությունը՝ ինձ մոտ հաճախակի հարց է ծագում, թե ովքե՞ր են դասավանդում Հայաստանում գործող բազմաթիվ մասնավոր բուհերում, այն պարագայում, որ երբեմն նույնիսկ պետական բուհերը կադրային հարցերում դժվարություններ են ունենում:

Ռուս-հայկական (Սլավոնական) պետական համալսարանում այս խնդիրը լուծված է: Մեզ մոտ ուսումնական և գիտական պրոցեսներին ներգրավված են տասնչորս իրավագիտության դոկտորներ և շուրջ երկու տասնյակ իրավագիտության թեկնածուներ:

- Խնդրում եմ ասել, ըստ Ձեզ արդո՞ք հայաստանյան իրավաբանական կրթական շուկայում գոյություն ունի՞ մրցակցություն և որքանո՞վ է այն ազդում իրավաբանական կրթության որակի բարձրացման վրա:

- Հայաստանի իրավաբանական շուկայում ոչ միայն մրցակցություն գոյություն ունի, այլ այն շատ մեծ ծավալ է ստացել: Արդեն իսկ իրավաբանների քանակը Հայաստանում այնքան շատ է, որ միայն լավագույններն են, որպես կանոն, աշխատանք գտնում ստացված մասնագիտությանը համապատասխան: Սի կողմից սա լավ է, քանի որ իրավաբանական գործունեությամբ զբաղվող մասնագետների որակն է բարձրանում, մյուս կողմից էլ՝ մեծ քանակով մարդիկ գործազուրկ են մնում: Եվ եթե հաշվի առնենք, որ ցավոք, միշտ չէ, որ արդար մրցակցություն է ապահովվում, ապա չի բացառվում, որ նույնիսկ լավ մասնագետները այս հարցում խնդիրներ ունենան: Ինչ վերաբերում է իրավաբանական կրթության որակին, ապա այստեղ, կրկնում եմ, որակն առաջին հերթին կախված է դասախոսից, որակ ապահովելու նրա կարողությունից և հետո միայն ծրագրայինից, կազմակերպական և այլ գործոններից:

- Ըստ Ձեզ, այսօր Հայաստանի իրավաբանական կրթական համակարգը որքանո՞վ է ինտեգրացված միջազգային իրավաբանական կրթական համակարգում: Եվ այս առումով ի՞նչ հնարավորություններ է ստեղծում Ձեր համալսարանի իրավագիտության ֆակուլտետն իրավաբան ուսանողների համար արտասահմանյան բուհերում ուսումը շարունակելու և արտասահմանյան հայտնի իրավաբանական դպրոցներից, թեկուզև կարճ ժակետներով, իրավաբան դասախոսներ ներգրավելու ուղղությամբ:

- Ռ-ՄՊՀ համար կարող եմ ասել, որ մենք մաքսիմալ հնարավորինս ինտեգրված ենք միջազգային իրավաբանական կրթական համակարգին: Մենք



արդեն անցել ենք Բոլոնյան համակարգի պահանջներով ուսուցանելու: Մենք այդ պահանջներին ձգտում ենք ոչ միայն ֆորմալ համապատասխանել, այլ նաև որակ ապահովել: Այստեղ առաջնային է լեզվի տիրապետումը: Ինչպես գիտեք՝ մեզ մոտ դասավանդումը շուտե՛րեմով է, որոշ առարկաներ հայերեն են դասավանդվում, որպեսզի մասնագիտական հայերենին ուսանողները տիրապետեն, իսկ հիմնարդեն որոշ առարկաների՝ օտար լեզվով դասավանդումն է ներդրում: Լեզուների ուսուցման որակի բարձրացման ուղղությամբ ևս լուրջ քայլեր են կատարված մեր համալսարանում: Բացի նրանից, որ օտար լեզուները մեր ուսումնական ծրագրի մեջ են մտնում, մենք ունենք նաև լեզվի կենտրոն, որտեղ ուսանողները լրացուցիչ գիտելիքներ են ստանում, բարձրացնում են լեզվի իմացության մակարդակը: Որպես դրա օրինակ՝ կարող եմ ասել, որ վերջին երեք տարվա ընթացքում իրավաբանական ֆակուլտետի ուսանողները, հաղթելով ներպետական Ձեռնարկի մրցույթը, ներկայացրել են Հայաստանը Վաշինգտոնում և անգլերենով են ելույթ ունեցել: Եվ ամեն տարի արդյունքը լավացնելով՝ օրինակ՝ գրավոր փուլում նախորդ տարի նրանք տասնվեցերորդն էին: Իսկ այս տարի Կանադայի թիմը, որը երկրորդ տեղը գրավեց մրցույթում, անհատական պայքարի մեջ մեր թիմին պարտվել էր:

Համագործակցությունը շատ սերտ է ուսական բուհերի հետ: Մենք համագործակցության պայմանագրեր ունենք Ռուսաստանի առաջադեմ բուհերի հետ: Մասնավորապես, Մոսկվայի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի հետ ունենք մեծ պայմանագիր, և Մոսկվայի պետական համալսարանի դասախոսները ամեն տարի գարնանը այստեղ դասընթացներ են անցկացնում: Սա արդեն ավանդույթ է դարձել: Ունենք ուսանողների փոխանակման ծրագրեր, օրինակ՝ Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական համալսարանի ուսանողները անցած տարի մեզ մոտ անցան դասընթացներ, այնուհետև մեր ուսանողները մեկնեցին Մոսկվա: Այս տարի սպասում ենք Կեմերովոյի պետական համալսարանի տաս ուսանողների, որոնք մեզ մոտ դասընթացներ են անցնելու:

Նման օրինակները բազմաթիվ են, անում ենք նաև լուրջ գիտական համատեղ ծրագրեր: Մեզ մոտ այժմ բացվում է համեմատական իրավագիտության կենտրոն, որը բացվելու է ուսական մի քանի հաստատությունների հետ համատեղ, մասնավորապես, կենտրոնը համագործակցելու է ուսական կառավարությանը կից գործող Համեմատական իրավագիտության և օրենսդրության ինստիտուտի հետ, ինչպես նաև Ռուսաստանի ազգային ակադեմիայի իրավունքի ինստիտուտի և այլ բուհերի հետ: Ընդհանրապես, մեր բուհը կարող է այս բնագավառում լուրջ դերակատարում ունենալ: Այսինքն՝ համեմատելով տարբեր երկրների իրավական համակարգերը՝ գտնել այլ երկրներում առկա դրականը և փորձել լրացնել մեզ մոտ եղած բացը:

Այս ծրագրի շրջանակում արդեն կյո՛ր սեղան է կազմակերպվել Ռուսաստանի ազգային ակադեմիայի իրավունքի ինստիտուտի ղոկտոր-պրոֆեսոր Ա.Վ. Մալկոյի ղեկավարությամբ: Շուտով կիրատարակվի գիտական հոդվածների ժողովածուն:

Մեր դասախոսները ևս հաճախ մասնակցում են տարբեր գիտաժողովների: Եվ մեր համալսարանի ղեկավարությունը մշտապես աջակցում է այս կապերի ստեղծմանն ու զարգացմանը:

Մեր բուհի ուսանողները զուգահեռ ուսումնասիրում են և ՀՀ և ՌԴ օրենսդրական դաշտերը: Եվ այստեղ մենք լուրջ ասելիք ու անելիք ունենք: Այդ առումով էլ մեր ուսական գործընկերների համար հետաքրքրություն ենք ներկայացնում, որովհետև օրենսդրության որոշ ճյուղերով Հայաստանը լուրջ առաջընթաց ունի ԱՊՀ երկրների մեջ: Եվ վերոնշյալ կենտրոնի ստեղծումն էլ համատեղ հետաքրքրությունների արդյունք էր:

Բուհն արդեն անցել է ուսուցման եռաստիճան համակարգի: Մենք ընդունելություն ենք կատարել մագիստրատուրայի չորս ուղղություններով՝ քրեական իրավունք, կոմերցիոն/ձեռնարկատիրական

իրավունք, միջազգային/եվրոպական իրավունք, սահմանադրական/մունիցիպալ իրավունք: Արդեն պլանավորում ենք ևս երեք ուղղություններով պետության և իրավունքի պատմության և տեսության, քրեական դատավարության/կրիմինալիստիկայի և քաղաքացիական դատավարության ուղղություններով մագիստրատուրայի բացումը: Մագիստրանտների քանակի սահմանափակում մենք չունենք, սահմանափակ է միայն պետպատվերը: Այս տարի երեսուցորս մագիստրանտ ունենք պետպատվերի շրջանակներում: Ասպիրանտուրա ունենք միջազգային/եվրոպական իրավունք ուղղությամբ, պետության և իրավունքի տեսություն, սահմանադրական/մունիցիպալ իրավունք, քրեական իրավունք, քաղաքացիական իրավունք և քրեական դատավարություն ուղղություններով: Այստեղ հինգից յոթ տեղ տրամադրվում է պետպատվերի շրջանակներում՝ Ռուսաստանի կրթության նախարարության կողմից:

Այս տարի իրավաբանական ֆակուլտետում ևս ներդրվեց կրեդիտային, ռեյտինգային համակարգը, որը նախատեսում է, որ ուսանողը ողջ կիսամյակի ընթացքում պետք է աշխատի, հակառակ դեպքում՝ նա չի կարողանա հավաքել իր կրեդիտը: Այն ունի մեծ առավելություններ, քանի որ նախորդ համակարգի դեպքում ուսանողը կարող էր ոչ ակտիվ լինել և վերջին մի քանի օրվա ընթացքում փորձեր յուրացնել առարկան: Բնականաբար, որակը չէր կարող բարձր լինել, արագ յուրացված նյութը շատ արագ մոռացվում էր: Իսկ հիմա ուսանողն առաջին օրվանից պարտավոր է սովորել: Ի դեպ՝ ուսանողները զգացին համակարգի առավելությունները և մեծ հետքերությամբ սովորում են, ստուգում իրենց ռեյտինգը, ձգտում այն բարձրացնել, և տիրում է առողջ մրցակցություն:

- Ինչպե՞ս կզնահատեք ներկայումս ՀՀ դատաիրավական համակարգի վիճակը:

- Դատաիրավական համակարգի վիճակի մասին վերապահումով կարող եմ խոսել: Համակարգի հետ առնչվում են նաև որպես պրակտիկ իրավաբան, չնայած՝ բարեփոխումներին անմիջական մասնակցություն չեմ ունեցել:

Այս բարեփոխումների մեջ ինձ անհանգստացնում է այն, որ մենք դրանք շատ արագ ենք անում: Հաճախ նույնիսկ չենք կարող տեսնել, թե նախկին ռեֆորմն ինչ արդյունքներ բերեց: Պետք է գնահատենք նախորդը, հասկանանք, նոր ինչ-որ բան փոխենք: Կան ոլորտներ, որ դեռ արդյունքը չտեսած, նորից լուրջ փոփոխություններ են իրականացվում: Ընդհանուր առմամբ ռեֆորմներին դրական եմ վերաբերվում, բայց այն բանին, թե ինչպես են դրանք իրականացվում Հայաստանում, վերաբերվում եմ վերապահումով: Կարելի է աստիճանաբար կատարել անցումը համակարգերի միջև: Եթե մի համակարգում ինչ-որ տարր փոխում ենք, դա ողջ համակարգն է դնում տրանսֆորմացիայի անհրաժեշտության առաջ, և մենք կանգնում ենք լուրջ, համակարգային բնույթի հիմնախնդիրների առաջ:

Վերջին տարիներին ամբողջ աշխարհում գործընթացներ են զննվում տարբեր իրավական համակարգերի՝ միմյանց մոտեցման ուղղությամբ: Նույն Ռոմանոզերմանական և Անգլոսաքսոնական համակարգերը, որոնք լուրջ տարբերություններ են ունեցել, իրավական գլոբալիզացիայի ընթացքում իրար մոտենալու միտումներ ունեն: Երևի կգա ժամանակ, երբ ամբողջ երկրագնդի վրա կլինի մեկ իրավական համակարգ: Ամեն ինչ պետք է անել աստիճանաբար, համակարգային կերպով:

ԱՆՁԵՌՆՄԻՆԵԼԻՆԵՐԻ ԿԱՍՏԱՆ. ԿԱՐԵԼԻ՞ Է ԱՐԴՅՈՔ ԸՆՁԱՍՏԱՆՈՒՄ ԴԱՏԻ ՏԱԼ ԴԱՏԱՎՈՐԻՆ

Երբ պետական մարմինները, պաշտոնատար անձինք իրենց գործողություններով կամ անգործությամբ խախտում են մեր իրավունքները, մենք գնում ենք առաջին ատյանի դատարան և դիմում ներկայացնում նրանց դեմ՝ համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (ՔԴՕ) 26-րդ գլխի:

Բայց լինում են դեպքեր, երբ դատարանն ինքն է խախտում քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները: Նման բան պատահում է շատ հաճախ այն դեպքերում, երբ, օրինակ, դատարանի գրասենյակը չի ընդունում ձեռնարկը հայցադիմումը, միջնորդությունը, բողոքը կամ չի տրամադրում գործում առկա փաստաթղթի պատճենը, վճռի հրապարակումից անմիջապես հետո վճռի օրինակը չի հանձնվում ձեզ և այլն, և այլն:

Այս դեպքում ո՞ր բողոքել: Իհարկե, ամենապարզ տարբերակը ենթակայության կարգով վերադասին դիմելն է: Բայց, ինչպես բոլորս հրաշալի պատկերացնում ենք, միգուցե դա օգնի, և ձեր գործը տեղից շարժվի, բայց պատասխանատվության կենթարկվի՞ այն անփութ պաշտոնյան, որի մեղքով ստիպված եք եղել նյարդայնանալ: Հնարավոր է, որ դուք դրա պատճառով կրել եք ոչ միայն բարոյական, այլ նաև նյութական վնասներ: Կարծում եմ՝ իրավախախտներից ոչ մեկը չի տուժի: Եվ եթե նույնիսկ ձեզ պատասխան տան, ապա պատճառ կբռնեն ծանրաբեռնվածությունը, գրասենյակային պիտույքների անբավարությունը և, աստված գիտի, թե էլ ինչ:

-Իսկ դատական կարգով կարելի՞ է արդյոք բողոքարկել նման անօրինական գործողությունները: Չէ՞ որ դատարանը պետական մարմին է, իսկ դատարանի աշխատողները՝ պետական ծառայողներ:

ՀՀ ՔԴՕ 26-րդ գլխից, կարծես թե, դրական պատասխան է տալիս: ՔԴՕ 160-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց՝ օրենքին հակասող ակտերը կամ նրանց գործողությունը (անգործությունը) անվավեր ճանաչելու մասին դիմումը, գործերի ենթակայությանը համապատասխան, տրվում է քաղաքացիական գործեր քննող դատարան կամ տնօրենական դատարան:

Այսպիսով, եթե դատարանի պաշտոնատար անձանց գործողություններում հանցակազմ չկա, դրանք պետք է վիճարկվեն քաղաքացիական դատավարության կարգով, այն է՝ ՔԴՕ 26-րդ գլխի կանոններով: Հակառակը կհակասեր դատական պաշտպանության սահմանադրական իրավունքին:

Նշանակում է՞ օրենքը թույլ է տալիս: Չէ՞ որ օրենքի առջև բոլորը հավասար են, այնպես չէ՞: Դեկավարվելով այս մտահանգմամբ՝ որոշ քաղաքացիներ որոշել են դիմել դատարան՝ վիճարկելով դատարանների և դրանց պաշտոնատար անձանց անօրինական գործողությունները: Բայց միանգամից նուրբ հարց է ծագում՝ ո՞ր դատարան դիմել: ՔԴՕ 12-րդ գլխին այլընտրանք չի թողնում. հայցը հարուցվում է պատասխանողի բնակության (զանգվելու) վայրի դատարան: Ստացվում է, որ դատարանի գործողությունները վիճարկել կարող եք միայն այդ նույն դատարանում: Վերաքննիչ դատարանի գործողությունները վիճարկելու համար ստիպված եք դիմել այդ դատարանի գտնվելու վայրի առաջին ատյանի դատարան, այն է՝ Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարան: Այսինքն՝ վերադաս դատարանին ենթակա դատարան: Իսկ Վճռաբեկ դատարանի գործողությունները կարելի է վիճարկել դատական համակարգի մեջ մտնող Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարան, այսինքն՝ այն համակարգի դատարան, որի «պսակը» այդ նույն Վճռաբեկ դատարանն է: Ստացվում է, որ ենթակա առաջին ատյանի դատավորները պետք է դատեն իրենց վերադասների՞ն: Այո: «Բայց դա անհեթեթություն է», - կասեք դուք: Իսկ ձեզ կպատասխանեն, որ մեզ մոտ դատավորներն անկախ են: Բայց, իհարկե, դա «չար դևի» առարկություն է: Այն, որ օրենքում ամրագրված է դատավորների անկախությունը և նրանց ենթարկվելը միայն օրենքին, այդ ամենը կեղծիք է: Ամենակախյալ և ամենաանիրավ պաշտոնյան մեր երկրում հենց դատավորն է:

Բայց սա դեռ ամենը չէ: Իրավակիրառական պրակտիկայում ամրապնդվում է այն դիրքորոշումը, որ դատավորի գործողություններն ու որոշումները չի կարելի բողոքարկել այլ կերպ, քան նրա կողմից կայացված վճռի դեմ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու ճանապարհով: Եվ, չգիտես ինչու, բոլոր դատավորները քաղաքացու դիմումի ընդունումը մերժելիս, վկայակոչում են հենց նույն ՔԴՕ 26-րդ գլխից (տես, օրինակ, Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարանի (հատավոր Ա.Կուրբանյան) 01.11.2006թ. և 29.03.2007թ. որոշումները, Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի (դատավոր Է. Ավետիսյան)



22.01.2007թ. որոշումը)՝ պատճառաբանելով, թե ՀՀ ՔԴՕ 26-րդ գլխում նախատեսված նորմերը չեն վերաբերում դատարանների (դատավորների) գործողությունները (անգործությունը) վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթին, և որ հիշյալ գլխի նորմերը ընդհանրապես, և ՔԴՕ 160-րդ հոդվածը, մասնավորապես, դատական իշխանություն իրականացնող մարմինների վրա չեն տարածվում, հետևաբար, քաղաքացու դիմումները ենթակա չեն դատարանում քննության. իբր ՔԴՕ 26-րդ գլխի նորմերը կոչված են այլ պետական, տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց հակաօրինական ակտերն ու գործողություններն անվավեր ճանաչելուն: Բայց թե ինչի՞ հիման վրա են դատավորներն այդպիսի եզրակացության հանգել, դատական որոշումներում չի նշվում: Իսկ չէ՞ որ դատարանի որոշումը պետք է լինի օրինական և հիմնավորված, այսինքն՝ ամրապնդված լինի համապատասխան օրենքին արված հղումով, որում նախատեսված է դատարանների պաշտոնատար անձանց՝ անմիջականորեն գործի դատաքննության հետ չկապված գործողությունները բողոքարկելու այլ կարգ: Դժվար չէ կռահել, որ ձևավորվող դատական պրակտիկան հիմնված է օրենքի միակողմանի, աչառու մեկնաբանության վրա:

Այժմ դատենք ինքներս: Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանության համար դատարան դիմելու հնարավորություն՝ անմիջականորեն ՀՀ Սահմանադրության հիման վրա (Սահմանադրության 6-րդ հոդվածի առաջին մաս):

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածը, որը երաշխավորում է դատական պաշտպանության իրավունքը, ելնում է արդարադատության մատչելիության յուրաքանչյուրի իրավունքն ապահովելու պետության պարտականությունից: Սահմանադրության 6-րդ, 18-րդ, 43-րդ և 44-րդ հոդվածների դրույթների վերլուծությունը հիմք է տալիս պնդելու, որ դատական պաշտպանության իրավունքը պատկանում է մարդու և քաղաքացու հիմնական, անօտարելի իրավունքների թվին: Բացահայտելով նշված սահմանադրական իրավունքի բովանդակությունը՝ ՀՀ Սահմանադրական դատարանը բազմիցս իր որոշումներում նշել է, որ Սահմանադրության 43-րդ (առաջին մաս) և 44-րդ հոդվածներին համապատասխան՝ այն չի կարող դատարանների կողմից դիտվել իբրև սահմանափակման ենթակա իրավունք: Սահմանադրական իրավունքների թույլատրելի սահմանափակումներ, Սահմանադրության 43-րդ հոդվածի առաջին մասին համապատասխան, կարող են մտցվել օրենսդրի կողմից միայն հողվածում թվարկված հանրային շահերի պաշտպանության նպատակով: Դատական պաշտպանության իրավունքը ոչ մի դեպքում չի կարող հակասության մեջ մտնել տվյալ նպատակների հետ և, հետևաբար, ենթակա չէ սահմանափակման: Ավելին, թվարկված նպատակներից և ոչ մեկը չի կարող արդարացնել դատական պաշտպանության հիմնարար իրավունքի սահմանափակումը, քանի որ այն հենց ինքն է մյուս բոլոր իրավունքների ու ազատությունների երաշխիքը: Սահմանադրության 44-րդ հոդվածը չի թույլատրում

դատական պաշտպանության իրավունքի սահմանափակում նույնիսկ ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ:

ՀՀ Սահմանադրության 91-րդ հոդվածի սահմանադրաիրավական իմաստից բխում է, որ դատարանների իրավագործությունը տարածվում է պետության մեջ ծագող բոլոր իրավահարաբերությունների վրա: 91-րդ հոդվածի դրույթի վերլուծությունը, 18-րդ հոդվածի առաջին և երկրորդ մասերի դրույթների հետ փոխադարձ կապի մեջ, հիմք է տալիս հանգելու այն հետևության, որ դատարաններին ենթակա են իր իրավունքների և ազատությունների պաշտպանության վերաբերյալ անձի բոլոր դիմումները: Այդ իսկ պատճառով դատարանը չի կարող մերժել արդարադատությունը, եթե ՀՀ քաղաքացին, օտարերկրացին, քաղաքացիություն չունեցող անձը կարծում են, որ իրենց իրավունքներն ու ազատությունները խախտվել են կամ խախտվում են, կամ խոչընդոտներ են ստեղծվել կամ ստեղծվում են դրանց իրականացման դեմ, կամ առկա է իրավունքների կամ ազատությունների ոտնահարման այլ իրավիճակ:

Փաստորեն, դատարանի մատչելիության սահմանադրական իրավունքը ենթադրում է, որ.

1) պետությունն իրավունք չունի սահմանափակելու կամ վերացնելու դատական հսկողությունը գործունեության առանձին բնագավառներում կամ առանձին կատեգորիայի անձանց վերաբերմամբ.

2) օրենքում չի կարող որևէ բացառություն նախատեսվել դատական իրավասությունից կամ քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները խախտող գործողությունների ու որոշումների դեմ բողոքների քննությունը չի կարող վերապահվել ոչ դատական մարմինների բացառիկ իրավասությանը:

ՀՀ Սահմանադրության 91-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան: Արդարադատություն իրականացնելիս դատավորը և սահմանադրական դատարանի անդամն անկախ են և ենթարկվում են միայն Սահմանադրությանը և օրենքին (97-րդ հոդվածի առաջին մաս): Դատարանների լիազորությունները, կազմավորման ու գործունեության կարգը սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքներով (Սահմանադրության 94-րդ հոդվածի երկրորդ մաս): Արդարադատության իրականացման կարգը կանոնակարգվում է համապատասխան դատավարական օրենսդրությամբ: Սակայն գործնականում դատավորն արդարադատություն իրականացնելու իր հիմնական գործառնությունից բացի իր գործունեության ընթացքում ընդունում է որոշակի ակտեր կամ կատարում գործողություններ, որոնք ըստ էության կապ չունեն արդարադատության իրականացման հետ և ավելի շատ պատկանում են կառավարչական գործունեության ոլորտին: Հետևաբար, դատավորի գործողությունների կամ որոշումների բողոքարկման կարգը ևս պետք է բխի նման տարբերակման տրամաբանությունից: Ասվածից հետևում է, որ պետք է տարբերակել դատավորին՝ իբրև արդարադատություն իրականացնող պաշտոնատար անձի, և դատավորին՝ իբրև արդարադատություն չիրականացնող պաշտոնատար անձի:

Դատարաններին գործերի ենթակայության, գործերի հարուցման, դրանք քննության նախապատրաստելու վերաբերյալ հարցերի լուծման հետ կապված դատավարական ակտերը և դատավորների գործողությունները, առաջին առյուծանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում գործերի քննությունը, դրանց վերաբերյալ դատական վճիռներ և որոշումներ ընդունելը պատկանում են արդարադատության իրականացման ոլորտին և կարող են բողոքարկվել միայն դատական կարգով՝ ՀՀ դատավարական օրենսդրությանը համապատասխան: Ընդ որում՝ արդարադատության իրականացման հետ կապված ակտերի և դատավորների գործողությունների բողոքարկման արտադատական կարգն անհնար է: Իսկ դատավորի այն գործողությունները, որոնք կապված չեն արդարադատության իրականացման հետ, կարելի է բողոքարկել քաղաքացիական դատավարության կարգով (ՔԴՕ 26-րդ գլուխ): Այդ իսկ պատճառով դատավորի այն որոշումները, որոնք արտահայտվում են, օրինակ, ծանուցագրերի կամ գրությունների ձևով, նույնպես կարելի է

բողոքարկել դատարանում ՔԴՕ 26-րդ գլխի կանոններով: Այսպիսով, պարզ է դառնում, որ դատարանների կողմից ՔԴՕ 26-րդ գլխով նախատեսված կարգով չեն քննվում դատավորների այն ակտերի ու գործողությունների դեմ քաղաքացիների ներկայացրած դիմումները, որոնք կապված են արդարադատության իրականացման հետ: Դրանց բողոքարկման կարգը սահմանվում է համապատասխան դատավարական օրենսդրությամբ: Դատարանների պաշտոնատար անձանց այն ակտերը, գործողությունները կամ անգործությունը, որոնք պատկանում են կառավարչական գործունեության ոլորտին, կարող են քաղաքացիների կողմից վիճարկվել դատական կարգով՝ ՔԴՕ 26-րդ գլխին համապատասխան:

Նշանակում է՝ ՔԴՕ վիճարկվող դրույթներում քաղաքացիական դատավարության կարգով դատարանների (դատավորների) գործողությունները (անգործությունը) և որոշումները վիճարկելու՝ քաղաքացիների իրավունքի ուղղակի ամրագրման բացակայությունը, ինչպես և այդպիսի դիմումը վարույթ ընդունելու՝ դատարանի պարտականության ամրագրման բացակայությունը չի կարող «կաթվածահար անել» քաղաքացիների այդ իրավունքը՝ երաշխավորված ՀՀ Սահմանադրությամբ: Սահմանադրության 18-րդ հոդվածից բխող՝ դատարանում ցանկացած իրավական ակտի բողոքարկման իրավունքը պետք է ապահովվի քաղաքացիական դատավարական օրենսդրության հիման վրա իրականացվող ստուգմամբ: Հետևաբար, դիմումատուն գրկված չէ ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով ամրագրված իր իրավունքն իրականացնելու հնարավորությունից՝ գործող քաղաքացիական և քաղաքացիադատավարական օրենսդրությամբ նախատեսված կարգով՝ օրենքի առջև բոլորի հավասարության սահմանադրական սկզբունքի հիման վրա (Սահմանադրության 14.1-րդ հոդ.):

Ակնհայտ է, որ դատարանը չի ուզում գնահատական տալ իր վերադասի գործողություններին ոչ այն պատճառով, թե օրենքով դա նախատեսված չէ, կամ գոյություն ունի ԳԱԳՏՆԻ ԴԱՍԱԿԱՆ այլ կարգ, որի մասին չի կարելի հիշատակել: Դատավորը հրաժարվում է բողոքի քննությունից, որովհետև ԿԱԽՎԱԾ Է վերադասից: Ահա հենց այստեղ է թաղված մեր դատական համակարգի ամենագլխավոր արատը՝ դատարանի նախագահի կամ վերադաս դատավորի անասանան իշխանությունը, ընդ որում, բոլոր առյուծաներում: Խորհրդային դատարանների վարչահրամայական համակարգը պահպանվել է մաքուր ձևով: Ավելին, այն ամրապնդվել է՝ հեռանալով ժողովրդի գիտակցությունից: Հենց որ դատավորը վճիռ կայացնի ըստ օրենքի, այլ ոչ թե ըստ դատարանի նախագահի կամ վերադասների «հասկացողության», միանգամից գործի է դրվում անհնազանդի պաշտոնից հեռացնելու մեխանիզմը:

Իհարկե, դատական համակարգում այնքան էլ նորմալ չէ այն երևույթը, երբ դատավորը պիտի դատի իր պետին: Անկասկած փոփոխություններ են պետք դատավարական օրենսդրության մեջ: Իսկպես, անհրաժեշտ է դատարանների և դրանց պաշտոնատար անձանց գործողությունների բողոքարկման այլ կարգ: Չէ՞ որ նման բողոքի ընդունումից դատարանի հրաժարումը, ինչպես արդեն տեսանք, սկզբունքորեն խախտում է ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված դատական պաշտպանության քաղաքացիների իրավունքը և դատարաններին ու դատավորներին վերածում է ինչ-որ մի «անձեռնմխելիների կատալի», այսինքն՝ մի կատեգորիայի, որը դուրս է իրավական դաշտի սահմաններից: Բայց կգամ՝ արդյոք այդպիսի փոփոխությունների այժմյան պատգամավորական կորպուսը: Կարծում ենք՝ չի գնա: Նշանակում է՝ այդպիսի բողոքներ պետք է տալ ավելի ու ավելի շատ և բողոքարկել դրանց քննության մերժումները՝ ընդհուպ մինչև Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Եթե ժողովրդի «ընտրյալներն» անգոր են, ապա գոյություն ունեցող իրավիճակը հնարավոր է հաղթահարել միայն զանգվածային բողոքներով ու միջազգային իրավական մեխանիզմների օգնությամբ:

ԳՈՐ ԸՈՎԸԱՆՆԻՅԱՆ

ՀՀ Սահմանադրական դատարանի իրավախորհրդատվական ծառայության գլխավոր մասնագետ

**«ԵՌԱԿՈՐԱ ՄԱՍԿՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ - ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԸՍՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ»
ԹԵՄԱՅՈՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ**

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

2007թ.-ի սեպտեմբերի 12-ից 14-ը Պրահայում, Չեխիայի Արտաքին գործերի նախարարության շենքում տեղի ունեցավ «Եռակողմ համագործակցություն և քաղաքացիական հասարակություն» թեմայով միջազգային կոնֆերանս, որին մասնակցում էին մոտ հարյուր ներկայացուցիչներ Հոլանդիայից, Բուլղարիայից, Չեխիայից, Հորվաթիայից, Մլովենիայից, Սլովակիայից, Ռումինիայից, Հունգարիայից, Սերբիայից, Լեհաստանից, Ուկրաինիայից, Մոլդովայից, Բելոռուսից, Վրաստանից և Հայաստանից:



Կոնֆերանսի առաջին օրը տեղի ունեցավ «Զաջության բռնկում» լուսանկարչական ցուցահանդեսի բացում, որը նվիրված էր Բելոռուսում մարդու իրավունքների խնդիրներին: Ցուցահանդեսի կազմակերպիչն էր չեխական «Փիփլը ին նիդ» կազմակերպությունը: Ցուցահանդեսի բացմանը ողջունի խոսք հղեց Չեխիայի արտաքին գործերի փոխնախարարը: Ցուցահանդեսին հաջորդեց կոնֆերանսի բացման առիթով կազմակերպիչների կողմից տրված հյուրասիրությունը, որի ընթացքում կոնֆերանսի մասնակիցները հնարավորություն ստացան անկաշկանդ միջավայրում ծանոթանալ միմյանց հետ և քննարկել երկկողմ հետաքրքրություններ ներկայացնող խնդիրներ:

Կոնֆերանսի երկրորդ օրը տեղի ունեցավ կոնֆերանսի պաշտոնական բացումը, որը կատարվեց Չեխիայի Հանրապետության Արտաքին գործերի փոխնախարար Հեկենա Բամբաստովայի կողմից: Այնուհետև կոնֆերանսի մասնակիցներին ներկայացվեց «ՓՈՓՈՒՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ» Մլովակիայում Նիդեռլանդական Մատրա ծրագրի իրականացման վերաբերյալ տեսանյութը, որի ավարտին հաջորդեցին զուգահեռ աշխատանքային խմբերի քննարկումներ՝ կրթություն, շրջակա միջավայր, մարդու իրավունքներ - փոքրամասնություններ, ՉԼՄ-ներ, արդարադատություն - հանրային վարչական իրավունք, սոցիալական քաղաքականություն - առողջապահություն - սոցապահովություն թեմաներով: Այնուհետև խմբային քննարկումները տեղափոխվեցին պետությունների (երկրների) մոտեցումների բնագավառ: Կոնֆերանսի երկրորդ օրն ավարտվեց «Եվրոպական հարևանության քաղաքականություն» թեմային նվիրված պլենար նիստով: Կոնֆերանսի երրորդ օրը արևելաեվրոպական չորս երկրների պաշտոնյաներ՝ Գաբրիելա Դոնին (Չեխիայի Արտաքին գործերի նախարարություն, անցումային աջակցության բաժնի տնօրեն), Ալինա Չերնյավսկան (Լեհաստանի Արտաքին գործերի նախարարություն, համագործակցության զարգացման բաժին), Դուշան Գաչոն (Մլովակիայի Արտաքին գործերի նախարարություն, զարգացման և մարդասիրական օգնության բաժնի տնօրեն) և Շանդոր Կոլեսը (Հունգարիայի Ժողովրդավարական անցման միջազգային կենտրոնի ծրագրի տնօրեն) ներկայացրեցին իրենց երկրների կողմից քաղաքացիական հասարակության զարգացմանը ուղղված պետական ծրագրերը: Այնուհետև աշխատանքային խմբերի կողմից ներկայացվեցին խմբային քննարկումների արդյունքներն ու առաջարկությունները, որին հաջորդեց կոնֆերանսի պաշտոնական փակումը: Կոնֆերանսը ֆինանսավորվել էր

Նիդեռլանդների Արտաքին գործերի նախարարության Մատրա ծրագրի կողմից, իսկ կազմակերպվել էր չեխական «Փիփլը ին նիդ» կազմակերպության կողմից: Կոնֆերանսը փորձի փոխանակման և արևելաեվրոպական երկրների քաղաքացիական հասարակության զարգացման տեսանկյունից արդյունավետ էր և ուսանելի: Կոնֆերանսին մասնակցում էր նաև Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի նախագահ, Հայաստանի իրավաբանական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ, փաստաբան Կարեն Ջադոյանը:





ՍԱՐԴԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՍԿԶՐՈՒՆԸ ԶԵՆԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒ

ՏԳԻՊԱԳՏ



Ինչպես ցանկացած գործունեություն, այնպես էլ քրեական դատավարությունն իրականացվում է որոշակի հիմնարար դրույթների հիման վրա, որոնք հանդիսանում են նման գործունեության բովանդակության հիմնաքարերը: Այդ սկզբունքները կանխորոշում են քրեական դատավարության ընթացքում իրականացվող գործողությունների ընթացքն ու բովանդակությունը և երաշխիքներ են ստեղծում քրեադատավարական գործունեության ընթացքում մարդու իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար: Նման սկզբունքներից մեկն էլ հանդիսանում է մարդասիրության (հումանիզմի) սկզբունքը: Հարկ է նշել, որ մարդասիրության սկզբունքը, ելնելով դրա կարևորությունից և պետությունների կողմից դրա գործնական կիրառման անհրաժեշտությունից, ուղղակի կամ անուղղակի կերպով իր ամրագրումն է գտել առաջին հերթին մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում: Մասնավորապես, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 1-ին հոդվածում նշվում է. «Բոլոր մարդիկ ծնվում են ազատ ու հավասար՝ իրենց արժանապատվությամբ և իրավունքներով: Նրանք օժտված են բանականությամբ ու խղճով և պարտավոր են միմյանց վերաբերվել եղբայրության ոգով»: Այս դրույթն, ըստ էության, մարդասիրության սկզբունքի դրսևորումներից է: Հումանիզմի սկզբունքը տեղ է գտել նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի և դրան կից արձանագրությունների բազմաթիվ

դրույթներում: Կոնվենցիայի մի շարք նորմերի վերլուծությունից ակնհայտորեն բխում է քննարկվող սկզբունքի կոնվենցիոն կարգավորման մասին: Կոնվենցիայի նման դրույթներից են խոշտանգումների, ստրկության, հարկադիր աշխատանքի արգելումը (3-րդ և 4-րդ հոդվածներ), ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը (5-րդ հոդված), արդար դատաքննության իրավունքը (6-րդ հոդված) և այլն: Հայաստանի Հանրապետությունում ներկայիս իրավական կարգավորման շրջանակներում մարդասիրության սկզբունքին առանձնահատուկ տեղ է հատկացվում նաև սահմանադրական մակարդակով: ՀՀ 2005 թ. սահմանադրական փոփոխություններից հետո վերանայվեց նաև մտեցումը մարդու, նրա իրավունքների, ազատությունների և արժանապատվության նկատմամբ: Այդ փոփոխությունների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ գործող Սահմանադրության մեջ առավել ընդգծված կերպով է արտահայտված մարդասիրության սկզբունքը՝ ի տարբերություն մինչև փոփոխությունները գործող Սահմանադրության: Օրինակ՝ ՀՀ Սահմանադրության հոդված 3-ի համաձայն՝ «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են: Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան: Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»: Կամ Սահմանադրության հոդված 14-ը սահմանում է. «Մարդու արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների ու ազատությունների անբախտելի հիմք, հարգվում և պաշտպանվում է պետության կողմից»: Խոսելով քրեադատավարական սկզբունքների և դրանցից հատկապես մարդասիրության սկզբունքի մասին՝ նախևառաջ պետք է անդրադառնալ այդ սկզբունքների համակարգին: Մրա հետ կապված՝ պետք է նշել, որ քրեադատավարական սկզբունքների համակարգի վերաբերյալ իրավաբանական գրականության մեջ չկա միասնական մոտեցում: Որոշ գիտնականներ քրեադատավարական սկզբունքների շարքն են դասում այն հիմնարար դրույթները, որոնք ընդգրկված են քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված սկզբունքների համակարգի մեջ, այսինքն՝ ունեն ուղղակի օրենսդրական ամրագրում: Մյուս խումբ գիտնականները քրեադատավարական սկզբունք են համարում նաև այն ելակետային դրույթները, որոնք բխեցվում են քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված այլ դրույթներից, մասնավորապես, քրեական դատավարության սկզբունքներից: Մեր կարծիքով, վերը շարադրված մոտեցումներից առաջինն ավելի ճիշտ է թվում. քրեադատավարական սկզբունք պետք է համարել օրենսդրական ամրագրում ստացած ելակետային դրույթները՝ ելնելով դրանց իշխանական բնույթի և համապարտադիր լինելու հանգամանքից: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վերլուծությունը ցույց է տալիս, որ մարդասիրության սկզբունքը, որպես այդպիսին, ուղղակիորեն նախատեսված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով: Մարդասիրության (հումանիզմի) սկզբունքի գոյությունը

քրեադատավարական հարաբերություններում վերլուծվում է միայն տեսական մակարդակով՝ բխեցվելով քրեական դատավարության այլ սկզբունքների բովանդակությունից: Հաշվի առնելով, որ քրեական դատավարությունը պետական գործունեության այն ուղղություններից է, որտեղ առավել մեծ է մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակման հավանականությունը, մարդասիրության սկզբունքը՝ որպես այդպիսի գործունեության կանխորոշիչ, ձեռք է բերում ավելի կարևոր և գործնական նշանակություն: Դիշտ է, քննարկվող սկզբունքը ուղղակիորեն նախատեսված չէ ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքով, բայց դրա գոյությունը, ինչպես արդեն նշել ենք, ենթադրվում է այլ սկզբունքների բովանդակությունից: Բացի դրանից, կարծում ենք, մարդասիրությունը քրեական դատավարությունում ունի ավելի լայն իմաստ և բովանդակություն: Այն հանդես է գալիս որպես դատավարական մի ուրույն կառուցակարգ, որով երաշխավորվում են մարդու իրավունքների, ազատությունների, արժանապատվության, բարոյական և այլ արժեքների պահպանությունն ու պաշտպանությունը: Մեր կարծիքով՝ օրինականության սկզբունքի նման մարդասիրության սկզբունքը ևս ընկած է քրեադատավարական բոլոր սկզբունքների հիմքում և յուրաքանչյուր սկզբունքի խախտում հանգեցնում է ինչպես օրինականության, այնպես էլ մարդասիրության սկզբունքի խախտման: Այն որպես դատավարական սկզբունք, ենթադրում է հանցագործությունների քննության գործընթացում մարդու ֆիզիկական, հոգեկան, նյութական, սոցիալական և այլ անվտանգության ապահովում: Գործող քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված են մի շարք նորմեր, որոնք վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցնում են մարդասիրական վերաբերմունք դրսևորել գործով անցնող անձանց նկատմամբ, եթե առկա են օրենքով նախատեսված անհրաժեշտ հիմքերը: Նման դատավարական նորմեր են հատկապես հանդիսանում քրեական դատավարության սկզբունքներին, մասնավորապես, օրինականությանը, անմեղության կանխավարկածին, անձի իրավունքները, ազատություններն ու արժանապատվությունը հարգելուն, անձի անձեռնմխելիությանը, բնակարանի անձեռնմխելիությանը, կրկին անգամ դատվելու անթույլատրելիությանը, մրցակցությանը վերաբերող դրույթները և այլն: Մարդասիրությանն են վերաբերում նաև այնպիսի քրեադատավարական նորմեր, ինչպիսիք են օրենքի հետադարձ ուժի արգելումը, գործի վարույթի կարճման հիմքերը (հատկապես ռեաբիլիտացիոն), անձի իրավունքներն ու ազատությունները սահմանափակող դատավարական հարկադրանքի միջոցների (օրինակ՝ կալանք, գրավ և այլն) կիրառման կամ քննչական գործողությունների կատարման (օրինակ՝ բնակարանի խուզարկություն, մասնակցության վերահսկողության և այլն) յուրահատուկ կարգի սահմանումը, քրեական դատավարության մասնակցող անձանց դիմումների, բողոքների միջնորդությունների ներկայացման, քննության և լուծման կարգը և այլն: Այսպիսով, մարդասիրությունն ունի օրենսդրական ձևակերպումներ, որոնք վարույթն իրականացնող մարմնին և հարավորություն են տալիս, հաշվի առնելով

գործի հանգամանքները, հանցավորի անձը և այլ պայմաններ, կիրառելու այդ նորմերը՝ ապահովելով մարդու իրավունքների, ազատությունների և արժանապատվության պահպանումն ու պաշտպանությունը:

Քրեական դատավարության հումանիզմը, ինչպես քրեական դատավարության մյուս սկզբունքները, կարևորագույն միջոց են հաջողությամբ կենսագործելու քրեական դատավարության՝ որպես համակարգային գործունեության ինչպես անմիջական, այնպես էլ համասոցիալական խնդիրները: Եվ հակառակը՝ գործնական աշխատանքում այդ նորմերի ոտնահարումը, թեկուզև քրեական գործով օրինական և օբյեկտիվ քննություն կատարելու դեպքում, կործանարար ազդեցություն են թողնում մարդկանց իրավագիտակցության, քննություն իրականացնող քրեական հետապնդման մարմնի, ինչպես նաև իշխանության ու պետության հեղինակության, նրանց մասին ձևավորվող հասարակական կարծիքի վրա՝ խոչընդոտելով քրեական դատավարության խնդիրների իրականացմանը:

Հումանիզմը, հարգանքը մարդու նկատմամբ, նրա բարի անվան պաշտպանությունը, իրավունքների իրականացման ապահովմանն ուղղված հոգատար վերաբերմունքը այն բարոյական սկզբունքներն են, որոնք բնորոշում են տվյալ երկրում իրականացվող նախնական քննության, քրեական դատավարության, ի վերջո, նաև ողջ իրավական համակարգի էությունն ու բովանդակությունը: Այս առումով պետք է նշել, որ մարդկային հասարակությանը հայտնի համամարդկային ընդհանուր բարոյականությունն նորմերից բացի, յուրաքանչյուր ժողովուրդ, ազգ ունի զուտ իրեն բնորոշ, ազգային բարոյականության նորմեր, որոնք դարերի ընթացքում մշակվելով դառնում են այդ ազգին պատկանող մարդկանց վարքագիծը կարգավորող կանոններ և այդ առումով սերտ առնչություն ունեն տվյալ երկրի իրավական համակարգի և այն բնորոշող իրավունքի առանձին ճյուղերի, իրավական ինստիտուտների և իրավանորմերի հետ: Այս տեսանկյունից քրեական դատավարությունում մարդասիրության սկզբունքը հանգում է բարոյական նորմերին: Այլ կերպ ասած՝ մարդասիրության սկզբունքին առնչվող մի շարք դատավարական նորմեր իրենց հիմքում ունեն բարոյական նորմեր և նույնացվում են բարոյական նորմերի (կանոնների) հետ: Այդ է վկայում դատավարական մի շարք դրույթների վերլուծությունը: Օրինակ՝ ՀՀ քր. դատ. օր. 220-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անհրաժեշտության դեպքում քննումը կատարվում է դատաբժշկության բնագավառի մասնագետի կամ բժշկի մասնակցությամբ: Քննումը, որը զուգորդվում է քննվող անձին մերկացնելու հետ, կատարվում է միևնույն սեռի պատկանող ընթերականների մերկայությամբ:

Քննիչը իրավունք չունի մերկա գտնվել մյուս սեռին պատկանող անձին քննելիս, եթե քննումը զուգորդվում է այդ անձին մերկացնելու հետ: Այդ դեպքում, քննիչի հանձնարարությամբ, քննումը կատարում է դատաբժշկության բնագավառի մասնագետը կամ բժիշկը: Մարդասիրության և բարոյականության նորմերի համատեղման մասին են ենթադրում նաև քր. դատ. օր. 228, 229-րդ հոդվածները: Ըստ ՀՀ քր. դատ. օր. 228-րդ հոդվածի 4-րդ մասի՝ քննիչը պարտավոր է ձեռնարկել միջոցներ, որպեսզի չհրապարակվեն ազգրավման և խուզարկության փաստը, ինչպես նաև դրանց արդյունքները և խուզարկվողի անձնական կյանքի հանգամանքները: ՀՀ քր. դատ. օր. 229-րդ հոդվածն էլ սահմանում է, որ անձնական խուզարկությունը կարող է կատարվել քննիչի կողմից՝ խուզարկվողի հետ նույն սեռի ընթերականների և մասնագետի մասնակցությամբ: Մարդկային արժանապատվությունը հարգելու, բռնության կամ հարկադրանքի բացառման ոգով են տոգորված անձի իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը հարգելու վերաբերյալ քրեադատավարական այլ նորմեր: Մասնավորապես, հռչակվել է, որ քրեական դատավարության ընթացքում ոչ ոք չպետք է ենթարկվի իր արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի, պահվի ստորացուցիչ պայմաններում, հարկադրվի մասնակցելու իր արժանապատվությունը նվաստացնող դատավարական գործողությունների: Անձի իրավունքներն ու արժանապատվությունը հարգելը պարտադիր է քրեական դատավարությանը մասնակցող բոլոր մարմինների և անձանց համար (ՀՀ քր. դատ. օր. հոդված 9):

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վերը բնութագրված նորմերի բովանդակությունն, այսպիսով,

հիմք է տալիս ենթադրելու, որ Հայաստանի Հանրապետությունում քրեական դատավարության հումանիզացման գլխավոր խնդիրը կարելի է լուծված համարել: Միաժամանակ, Հայաստանի Հանրապետությունում ընթացող դատաիրավական բարեփոխումների բովանդակության վերլուծության արդյունքում կարելի է հանգել այն եզրակացության, որ քրեական դատավարության հումանիզացման գործընթացը դեռ շարունակվում է: Այդ են վկայում քրեական դատավարության օրենսգրքի մի շարք փոփոխություններն ու լրացումները: Խոսքը հատկապես վերաբերում է ՀՀ քր. դատ. օր. 188.1 հոդվածին՝ «Նախնական քննության ընդհանուր պայմանները» վերտառությամբ, որը սահմանում է.

1. Քննչական գործողությունների իրականացումը գիշերային ժամերին չի թույլատրվում՝ բացառությամբ անհետաձգելի դեպքերի.

2. Քննչական գործողություններ իրականացնելիս անթույլատրելի են նախնական քննության մասնակիցների նկատմամբ բռնության, սպառնալիքի և անօրինական այլ գործողությունների գործադրումը, ինչպես նաև նրանց կյանքի և առողջության համար վտանգավոր պայմանների ստեղծումը.

3. Քննիչը, քննչական գործողությունների իրականացմանը ներգրավելով կասկածյալին, մեղադրյալին, տուժողին, քաղաքացիական հայցվորին, քաղաքացիական պատասխանողին, նրանց ներկայացուցիչներին կամ իրավահաջորդներին, ինչպես նաև քր. դատ. օր. 81-րդ, 83-86-րդ հոդվածներում նշված անձանց՝ ճշտում է նրանց ինքնությունը, բացատրում իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև քննչական գործողության իրականացման ընդհանուր կարգը: Եթե քննչական գործողության իրականացմանը մասնակցում են տուժողը, վկան, փորձագետը կամ թարգմանիչը, ապա քննիչը նրանց համապատասխանաբար նախազուշացնում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 338-րդ, 339-րդ հոդվածներով նախատեսված քրեական պատասխանատվության մասին.

4. Քննիչն իրավունք ունի քննչական գործողության իրականացմանը ներգրավելու օպերատիվ հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի պաշտոնատար անձանց, ինչի մասին նշում է կատարվում համապատասխան քննչական գործողության արձանագրությունում»:

Ճիշտ է, նշված հոդվածը որպես մարդասիրության սկզբունքի դրսևորում, վերաբերում է նախնական քննությանը, սակայն այն կարևոր նշանակություն ունի նաև ողջ քրեական դատավարության համար: Մեր կարծիքով՝ քրեական դատավարության հումանիզացման գործընթացում կարևոր նշանակություն ունի հատկապես ՀՀ քր. դատ. օր. 183-րդ հոդվածում կատարված լրացումը, որով ընդլայնվել է այն գործերի շրջանակը, որոնք հարուցվում են բացառապես տուժողի բողոքի հիման վրա և կասկածյալի կամ մեղադրյալի կամ անբաստանյալի հետ նրա հաշտվելու դեպքում ենթակա են կարճման: Օրենսդրական այս փոփոխություն մեջ մարդասիրական սկզբունքն արտահայտվում է նրանում, որ օրենսդիրը, հաշվի առնելով ՀՀ քր. դատ. օր. 183-րդ հոդվածում թվարկված հանցագործությունների բնույթն ու ոչ մեծ համրային վտանգավորությունը, վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցնում է մարդասիրական մոտեցում դրսևորել կասկածյալի, մեղադրյալի կամ անբաստանյալի նկատմամբ և համապատասխան դեպքերում չհարուցել քրեական գործ կամ կարճել գործի վարույթը:

Բացի վերոնշյալ օրենսդրական դրույթներից՝ կարելի է առանձնացնել նաև մարդասիրության սկզբունքն արտահայտող այլ օրենսդրական նորմեր, որոնք հանդիսանում են հասարակական հարաբերությունների առաջընթաց զարգացման արդյունք և վկայում են քրեական դատավարությունում հումանիզմի սկզբունքի լայնակի կիրառման մասին: Կարծում ենք՝ հասարակական հարաբերությունների հետագա զարգացումն իր հերթին կհանգեցնի այս սկզբունքն ամրագրող դրույթների նորովի զարգացմանն ու կատարելագործմանը:

ԼՅՈՒԿԻԳ ԴԱՎԹՅԱՆ

Երևանի պետական համալսարանի
Իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտ

«ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ՍԵՄԻՆԱՐ

2007 թվականի հուլիսի 16-ին Երևանի Գոուլդեն Թյուլիպ Երևան հյուրանոցում տեղի ունեցավ «Իրավապաշտպան կազմակերպությունների դերը մարդու իրավունքների պաշտպանության գործում» քննարկ սեմինար, որը կազմակերպվել էր Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի Մարդու իրավունքների հանձնաժողովի և Հայաստանի իրավաբանական հիմնադրամի կողմից:

Սեմինարի նպատակն էր բարձրացնել իրավապաշտպան կազմակերպությունների դերը, մշակել առավել արդյունավետ մեխանիզմներ պետական մարմինների հետ հարաբերությունների առնչությամբ, հնարավորություն ընձեռել ՀՀ-ում մարդու իրավունքների պաշտպանության և համապատասխան մոտեցումների մշակման գործընթացներում առավել գործուն առաջարկների մշակման և շահագրգիռ կառույցների ներկայացման համար:

Քննարկմանը հրավիրված էին ներկայացուցիչներ Հայաստանյան և միջազգային իրավապաշտպան ՀԿ-ներից, ՀՀ ԱԺ-ից, Հայաստանում միջազգային և արտասահմանյան կառույցների ներկայացուցիչություններից, Փաստաբանների պալատից և այլ շահագրգիռ կառույցներից:

Սեմինարի բացման խոսքով հանդես եկավ ՀԵԻԱ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի ղեկավար Գայանե Մարտիրոսյանը՝ ողջունելով ներկայացնող և հակիրճ ներկայացնելով օրակարգը: ՀԵԻԱ-ի նախագահ, փաստաբան Կարեն Ջաղոյանը իր ողջույնի խոսքում նշեց այն հիմնական խնդիրները և գործունեության ուղիները, որոնք առկա են այսօր մարդու իրավունքների ոլորտում: Դրանցից է իրազեկությունը, որին ուղղված գործունեության համատեքստում Կ. Ջաղոյանը նշեց պետության և իրավապաշտպան կազմակերպությունների կողմից համատեղ հանրային իրազեկման ծրագրի ստեղծումը, իրավաբանական ռեսուրս-կենտրոնների հիմնադրումը: Մյուսը մարդու իրավունքների պաշտպանությունն է, որը այսօր գտնվում է բավական խցելի վիճակում, և այդ վիճակը երկրում արդարադատության իրականացման հիմնական ցուցանիշ կարելի է համարել: Հաջորդ խնդիրը իրավապաշտպան կառույցների հզորացումն է: Սակայն միայն դրամաշնորհները այստեղ բավարար չեն, և, ըստ Կ.Ջաղոյանի, անհրաժեշտ են նաև պետական մեթոդներ: Վերջին կարևոր խնդիրը մարդու իրավունքների ոլորտում օրենսդրական դաշտի բարելավումն է, այդ թվում՝ միջազգային իրավական փաստաթղթերի պահանջների ամրագրումը ներպետական օրենսդրությունում: Որպես ներպետական օրենսդրության անկատարության կամ սահմանադրական իրավունքի պաշտպանության սկզբունքին հակասող օրինակ Կ.Ջաղոյանը նշեց վերջերս ներմուծված ՀՀ Վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանների ինստիտուտը և կոչ արեց երկրորդ սերնդի բարեփոխումները սկսել դատաիրավական համակարգից: Վերջում նա նշեց, որ հենց այս հիմնական ուղղություններն է ՀԵԻԱ-ն որոնքով առաջիկա 4 տարիների ընթացքում աշխատելու համար:

Առաջինը ելույթ ունեցավ ՀՀ ԱԺ Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Արևիկ Պետրոսյանը: Նա ներկայացրեց ԱԺ նրա ստեղծ հանձնաժողովի հիմնական նպատակները, գործունեության հիմնական ուղղությունները, որոնք տասից ավելի են: Որպես առաջնային նպատակ



նա նշեց քաղաքացիների, հասարակության հետ ակտիվ համագործակցության սկիզբը: Չեռնարկված կարևորագույն աշխատանքներից են մարդու իրավունքների բնագավառում քաղաքացիական հասարակության ինստիտուտների, գիտական հաստատությունների կողմից իրականացված դիտարկումների, հետազոտությունների վերաբերյալ տեղեկատվության և վիճակագրության հավաքումը: Տիկին Պետրոսյանը առաջարկեց բոլոր շահագրգիռ կողմերին բարձրացնել այս ոլորտի խնդիրները, դաշտ բերել կատարված ուսումնասիրությունները, հետազոտությունները, որոնք կարող են հիմք լինել օրենսդրական փոփոխությունների համար: Նա նշեց, որ հանձնաժողովը համագործակցելու է մարդու իրավունքների պաշտպանի, փաստաբանների պալատի, դատական իշխանության մարմինների և, իհարկե, ՀԿ-ների հետ: Իր ելույթում նա կոչ արեց բոլորին համայնքային ծառայության ինստիտուտի ձևավորման նպատակով ներկայացնել դիտարկումները, առկա խնդիրները, շարադրել մոտեցումները և մատնանշել լուծումներ, գործնական, կոնկրետ առաջարկներ: Պետք է նաև հաշվի առնել գնահատման մեխանիզմի, ինչպես նաև հետադարձ կապի օգտագործման ուղիների կարևորությունը:

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի ղեկավար Արթուր Սաքունցը իր ելույթը սկսեց այն դիտարկումով, որ որքան Հայաստանում մեծանում է իրավապաշտպան կառույցների թիվը, այնքան վատթարանում է մարդու իրավունքների պաշտպանության վիճակը: Բերելով վերջերս ՀՀ-ում տեղի ունեցած իրավախախտումների օրինակներ՝ Միքայել Դանիելյանի դեմ կիրառված բռնությունը, Հյուսիսային պողոտայի նախկին բնակիչների շահերը ներկայացնող Վահե Գրիգորյանի գործը, Արտադիսի գործով փաստաբան Ջարուհի Փոստանյանի նկատմամբ կիրառվող հետապնդումները, Ա.Սաքունցը նշեց, որ ՀՀ-ում փաստորեն տիրում է համակարգային մարդու իրավունքների խախտումների վիճակ: Նա նաև իր վրդովմունքն արտահայտեց իշխանության նկատմամբ, որը իր լրատվական միջոցներով

ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ



ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ



ամվստահություն է հայտնում քաղաքացիական հասարակության ինստիտուտների՝ ՀԿ-ների նկատմամբ, նշելով, որ սա կոնվենցիայի պահանջների խախտում է, և նույնիսկ ԵԱՀԿ վեհաժողովը վերջերս կարևորել է մարդու իրավունքների պաշտպանության գործում այս ինստիտուտների դերը: Ա.Սաքունցը նշեց, որ իշխանությունը օրենսդրական և գործնական առումներով, հասարակական կարծիքի առումով պայմաններ չի սպառնում, որ զարգանա իրավապաշտպան գործունեությունը: Որպես օրինակ նշեց այն, որ «ՄԴ-ին օմբուդսմենի դիմելուց հետո թույլ տրվող անօրինականությունների համար ՄԴ-ն օրինական հիմքեր ստեղծեց»: Ըստ նրա՝ այսօր Հայաստանում կան քաղաքանտարկյալներ և այլևս ինչի մասին կարող է խոսք լինել: Այս վիճակի հաղթահարման ուղին, ըստ Ա.Սաքունցի, անտարբեր չլինելն ու չհանդուրժելն է և քաղաքացիական հասարակության ինստիտուտների, ԱԺ-ի, օմբուդսմենի, ԵԽ-ի, ԵՄ-ի հետ համագործակցելն է, անտկապես, երբ հայտնի է, որ միջազգային կառույցները պետք է մոնիթորինգ անցկացնեն իրավապաշտպան կառույցների շրջանում:

Այնուհետև ելույթ ունեցավ ԱրմենՏել ընկերության աշխատակիցների «Հավատ» արհեստակցական կազմակերպության նախագահ Հարություն Խառատյանը՝ ներկայացնելով վերջին երկու տարիների ընթացքում ԱրմենՏել ընկերության աշխատակիցների իրականացրած նախագծուշական գործադրույի և դրա արդյունքում աշխատակիցների նկատմամբ կիրառված իրավախախտումների հետևանքով ՀՀ դատական տարբեր առյաններում և Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ՀԵԻԱ-ի կողմից «գործադրվածների» շահերի պաշտպանության հետևողական գործընթացը և արձանագրված հաջողությունները: Վերջում նա նշեց, որ կոնկրետ գործով մինչև վերջ հետամուտ լինելու դեպքում, «նույնիսկ մեր դատական համակարգում», հնարավոր է լինում հասնել հաջողությունների:

Շահերի պաշտպանության ոչ կառավարական կոալիցիայի ներկայացուցիչ Գերասիմ Բարսեղյանը իր խոսքում անդրադարձավ Ա.Սաքունցի ելույթին՝ նշելով, որ սպասում էր ավելի համակարգային հարցերի արծարծում և կոչ արեց իրավապաշտպան ՀԿ-ներին համագործակցել ԱԺ նորաստեղծ հանձնաժողովի հետ:

Արևիկ Պետրոսյանը իր խոսքում նշեց, որ գնահատականներ ճիշտ է տալ այն ժամանակ, երբ կսկսվի հանձնաժողովի գործունեությունը: Մտո մեկ ամսվա գործունեության ընթացքում հանձնաժողովը ստացել է մոտ քսան դիմում և ընդունել տասնից ավելի քաղաքացիների: Օրենսդրական փոփոխություններ են նախատեսված ՀՀ մի քանի օրենքների, մասնավորապես, անհայտ կորածների, բռնադատվածների, մարդկանց առևտրի և այլ օրենքների առնչությամբ: Նա ևս մեկ անգամ կոչ արեց

հանձնաժողովին ներկայացնել մարդու իրավունքների ոլորտում կատարված դիտարկումները՝ վերլուծական նյութերի, առաջարկությունների, լուծման ուղիների, միջազգային փորձի համադրությամբ: Այս ամենից հետո միայն հնարավոր կլինի ավելի առարկայական խոսել:

Միքայել Դանիելյանը նշեց, որ այսօր ՀՀ-ում կա ազատագրված 75 հոգի, ովքեր, այսպես ասած, «խղճի գերիներ» են: Նա առաջարկեց միջազգային ստանդարտներին համապատասխանեցնել այլընտրանքային ծառայության մասին օրենքը:

ՀՀ Փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավար Միշա Փիլիպոսյանը իր ղեկավարած կառույցի վերաբերյալ նշեց, որ այն ամենամեծն է ՀՀ-ում մարդու իրավունքների պաշտպանության հարցում: Մակայն նա, ցավոք, չի տեսնում ՀԿ-ների վերաբերմունքը իրենց նկատմամբ: Միայն ՀԵԻԱ-ի կողմից է գրասենյակ ուղարկվել դատապարտված քաղաքացու վերաբերյալ գրություն-միջնորդագիր, որի գործով այժմ զբաղվում է հանրային պաշտպանի գրասենյակի փաստաբանը: Նա խրախուսեց ուղիղ կապը ԱԺ հանձնաժողովի և հանրային պաշտպանի գրասենյակի միջև: Մ.Փիլիպոսյանը կարևորեց գրասենյակի՝ պետության հովանու ներքո գտնվելու փաստը, նշելով, որ անցնող տարվա ընթացքում պետությունը բավականին միջոցներ է տրամադրել գրասենյակին:

Քննարկումն ամփոփեց ՀԵԻԱ-ի նախագահը, որը շնորհակալություն հայտնեց ներկայներին և հույս հայտնեց, որ այս ուղղվածության միջոցառումները կլինեն շարունակական: Այս քննարկումների արդյունքում ՀԵԻԱ-ն ՀՀ ԱԺ Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողով կներկայացնի «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում և դրա հետ փոխկապակցված մյուս օրենքներում փոփոխությունների կատարման նախագիծ (Փոփոխությունների նախագիծ և սեմինարի մասին մանրամասն տես «Իրադարձությունների» էջի սեմինարներ բաժնում), որով կառաջարկվի ուժը կորցրած ճանաչել ՀՀ Վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանի ինստիտուտը, քանի որ վերջինիս ներդրմամբ խախտվում է անձի իր իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության արդյունավետ միջոցների սահմանադրական իրավունքը: «Իրավապաշտպան կազմակերպությունների դերը մարդու իրավունքների պաշտպանության գործում» քննարկումը լուսաբանվեց ԱԲ, Արմնյուզ, Հ2 հեռուստաընկերությունների, Ազատություն ռադիոկայանի, Հանրային ռադիոյի, «Առավոտ» և «Իրավունք» թերթերի կողմից:

Քննարկման ավարտին մասնակիցները ավելի անկաշկանդ միջավայրում հնարավորություն ստացան քննարկել իրենց հուզող հարցերը՝ իրավիրվելով հյուրասիրության կազմակերպիչների կողմից:



ԿՏԱԿԵԼ՝ ՈՐՊԵՏ ԲԱՂԱՔԱՅՈՒ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ՀՀ Սահմանադրության 31 հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը: Կտակել նշանակում է կտակ գրել և կտակի միջոցով հիմք ստեղծել գույքի հետմահու փոխանցման համար: Քաղաքացիաիրավական հարաբերությունները դժվար է պատկերացնել առանց կտակի, քանի որ քաղաքացիաիրավական նորմերն ավելի լայն կարգավորման առարկա ունեն, և հնարավոր չէ մեկ օրենսգրքի շրջանակներում նախատեսել այն բոլոր հնարավոր դեպքերը, որոնք առաջանում են մարդկային գործունեության ընթացքում: Հենց դրանում էլ կայանում է կտակի ողջ իմաստն ու նշանակությունը՝ ինքնուրույն կարգավորել այն առանձնահատուկ դեպքերը, որոնք դուրս են մնացել օրենսդրի կարգավորման դաշտից՝ սեփական նախաձեռնությամբ սահմանելով ապագա իրավահաջորդության պայմաններն ու կարգը: Դրանով իսկ քաղաքացին իրականացնում է իր քաղաքացիական կարևորագույն դիսպոզիտիվ իրավունքներից մեկը՝ սեփականության տնօրինման իրավունքը:



Որպես իրավունք՝ ժառանգումը հանդես է գալիս միմիայն մասնավոր սեփականության հիմքի վրա: Եվ ամենևին պատահական չէ, որ ժառանգման իրավունքի՝ Սահմանադրությամբ երաշխավորվելու դեպքում այդ դրույթը գետեղվում է մասնավոր սեփականությունը երաշխավորող դրույթի հետ համատեղ (ՀՀ, ՌԴ, Գերմանիա և այլն): Եթե մահացածի իրավունքներն ու պարտականությունները չփոխանցվեն ժառանգաբար, ապա անբարենպաստ հետևանքներ կառաջանան այն իրավահարաբերություններում, որոնց սուբյեկտն էր հանգուցյալը: Ժառանգման բացակայությունը կհանգեցնի աշխատանքային և գործարարական ակտիվության նվազեցմանը, անժամկետ սեփականության իրավունքը կվերածվի ժամկետայինի: Կտակը հանդիսանում է քաղաքացիական իրավունքի առանցքային և հնագույն ինստիտուտներից մեկը: Պատմականորեն ըստ կտակի ժառանգումը հաջորդել է ըստ օրենքի ժառանգմանը, որի ուժով գույքը մնում էր ընտանիքում՝ որպես հնագույն ժամանակներից այդ գույքի նկատմամբ իրավունքը կրողի: Սակայն գույքը իր մահվանից հետո ժառանգների միջև հնարավոր տարբերակներով բաժանելու մտահոգությունը միշտ էլ եղել է քաղաքակրթության շրջանի մարդկանց մտո: Եվ որպես սեփականատիրոջ կամքի արտահայտման միջոց՝ ի հայտ է եկել կտակը: Կտակի ինստիտուտը իրեն բնորոշ ժամանակակից հատկանիշներով ձևավորվել է Հին Հռոմում: Հայ իրականությունում կտակի ունեցած դերի մասին տեղեկություններ ստանում ենք հայ խոշոր իրավագետների աշխատություններից: Մասնավորապես, Մ. Գոշր կտակի ազատությունը ընդունում էր որպես ելակետ, իսկ Սմբատ Սյարայետը ըստ օրենքի ժառանգման կարգը նախատեսում էր սոսկ «որպես ելք անօգնական դրությունից այն դեպքում, եթե հայրը կտակ չի թողել»:

ՀՀ-ում ժառանգումն իրականացվում է ըստ օրենքի կամ ըստ կտակի: Որոշ երկրներում (Գերմանիա, Շվեյցարիա) ժառանգման հիմք է համարվում նաև այսպես կոչված «ժառանգման պայմանագիրը», որի ուժով ժառանգատուն պարտավորվում է մահից հետո իր գույքը թողնել պայմանագրի մյուս կողմին կամ երրորդ անձի: Պրակտիկայում, սակայն, այս հիմքը քիչ կիրառություն ունի: Ըստ օրենքի ժառանգման դեպքում ժառանգների շրջանակը և նրանց անցնելիք բաժինների չափը սպառնիչ թվարկված է օրենքով, իսկ ըստ կտակի ժառանգման դեպքում կտակարարը օրենքով թույլատրված սահմաններում կարող է դա փոխել իր հայեցողությամբ: Այս երկու հիմքերի փոխհարաբերությունը հանգում է հետևյալին. ժառանգումն ըստ օրենքի տեղի ունի այնքանով, որքանով փոխված չէ կտակով: Օրինական ժառանգների շրջանակը (ըստ դասերի կամ հերթերի) տարբեր երկրներում տարբեր է. Ֆրանսիայում և Շվեյցարիայում դրանք երեքն են, ՌԴ-ում՝ ութը, իսկ Գերմանիայում ընդհանրապես սահմանափակում չկա: ՀՀ Քաղաքացիական օրենսգրքը սահմանում է ըստ օրենքի ժառանգների չորս հերթ, նաև նշում այն անձանց, ովքեր ժառանգման են հրավիրվում ներկայացման իրավունքով: Եթե ժառանգատուն նախապատվությունը տալիս է ըստ օրենքի ժառանգմանը, ապա նրա ունեցվածքի ետմահու տնօրինման հարցը լուծվում է լռելյայն, առանց որևէ գործողության՝ կտակ կազմելու: Մրա հետ մեկտեղ ժառանգատուին հնարավորություն է տրվում կոնկրետ սահմաններում կարգադրություն անել իրեն պատկանող իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ:

Կտակի առկայության դեպքում ըստ օրենքի ժառանգումը գործում է ժառանգատուի չկտակված իրավունքների ու պարտականությունների կամ կտակի անվավեր ճանաչված մասի նկատմամբ:

Կտակը քաղաքացու՝ իրեն պատկանող գույքի փոխանցման մասին ի դեպ մահվան և օրենքով սահմանված կարգով արված կամքի արտահայտման ակտն է, որը կարող է պարունակել նաև ոչ գույքային բնույթի կարգադրություններ (օրինակ՝ հուղարկավորության ծեսի կամ քաղման մասին): Կտակն օժտված է որոշակի իրավաբանական հատկանիշներով, որոնցով այն տարբերվում է ի դեպ մահվան արված այլ կարգադրություններից: Կտակը որպես կարգադրություն է ի դեպ մահվան, իրավաբանական ուժ ստանում է իրավական հետևանքներ առաջացնում է միայն կտակարարի մահից հետո:

Որպես կտակարարի կամքի արտահայտման ակտ՝ կտակն իրենից ներկայացնում է միակողմանի, անձնական, ձևական, տնօրինչական գործարք: Միակողմանի, որովհետև արտահայտում է մեկ անձի՝ կտակարարի կամքը և չի ենթադրում որևէ այլ անձի հանդիպակաց կամքի արտահայտություն: Ոչ ոք, անգամ դատարանը չի կարող փոփոխություն մտցնել քաղաքացու կտակի մեջ: Որպես ձևական գործարք՝ կտակը պետք է կազմվի օրենքով սահմանված ձևի պարտադիր պահպանմամբ, իսկ որպես անհատական գործարք՝ անձամբ կտակարարի կողմից: Երբեմն անձը, կապված իր ֆիզիկական վիճակի հետ, կարող է դիմել այլ անձանց օգնությանը, որոնք սակայն ցույց են տալիս միայն ֆիզիկական կամ տեխնիկական օգնություն: Ավելին, այդ անձինք, ինչպես նաև կտակը վավերացնող նոտարը և կտակակատարը, պարտավորվում են պահպանել կտակի գաղտնիությունը մինչև կտակի բացվելը:

Վերջապես, կտակն իրենից ներկայացնում է տնօրինչական գործարք, քանի որ կտակը անձի կարգադրությունն է իրեն պատկանող գույքի վերաբերյալ. գույքը ի դեպ մահվան կարող է տնօրինվել միայն կտակի միջոցով: Եվ նախաձեռնան, որ կտակը կարող է պարունակել նաև ոչ գույքային բնույթի կարգադրություններ, կտակի համար անհրաժեշտ է պարտադիր գույքային տարրը: Անձի՝ իր գույքի մասին ի դեպ մահվան ընդհանրապես ցուցում չպարունակող կարգադրությունը չի կարող կտակ համարվել:

Կտակ կազմելը կամային գործողություն է, և եթե ըստ օրենքի ժառանգման դեպքում ժառանգատու կարող է լինել ցանկացած քաղաքացի՝ անկախ գործունակության աստիճանից, ապա կտակ անել կարող է միայն լրիվ գործունակ քաղաքացին: Կտակ կազմել կարող են այն քաղաքացիները, որոնց 18 տարին լրացել է կտակը կազմելու պահին, ինչպես նաև մասնափայլվածները և 18 տարեկան չդարձած, սակայն ամուսնացած անչափահասները: Կտակ անելուց հետո գործունակությունը կորցնելը չի ազդում մինչ այդ կազմված կտակի ուժի օրինականության վրա: Կտակի վավերության առթիվ վեճերը լուծվում են դատական կարգով: Միայն դատարանը իրավունք ունի լուծել

ԿՏԱԿԵԼ՝ ՈՐՈՒՄ ԲԱՂԱՔԱՅՈՒ ՍԱՐՏԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

օրենքին կտակի համապատասխանության հարցը: Կտակը անվավեր է ճանաչվում գործարքների վավերության մասին դրույթները խախտելու հետևանքով: Կտակի վավերության հիմնական պայմանը օրենքով սահմանված ձևի պահպանումն է: Կտակը պետք է կազմվի գրավոր՝ նշելով այն կազմելու վայրը և ժամանակը, անձամբ ստորագրվի կտակարարի և վավերացվի նոտարի կողմից:

Ժառանգման իրավունքը հենվում է երկու հիմնական սկզբունքների վրա՝ կտակի ազատություն և ընտանիքի, պարտադիր ժառանգների շահերի պաշտպանություն: Ժառանգման ինստիտուտը ձևավորվում է այս սկզբունքների վրա, սրանք ներթափանցում են ողջ ժառանգման իրավունքի մեջ: Կտակի ազատությունը (առաջին անգամ սահմանվել է 1964թ. ՀԽՄՀ Քաղաքացիական օրենսգրքով) վերաբերում է ինչպես ժառանգների և նրանց անցնելիք բաժնի որոշման, այնպես էլ ժառանգական գույքի օգտագործման կարգին կամ նպատակին, բացի այդ՝ կտակարարը կարող է ցանկացած ժամանակ վերացնել, փոփոխել կամ լրացնել իր կազմած կտակը: Առջինն են ինչպես կտակ կազմելուց հրաժարվելու, այնպես էլ կտակի անփոփոխելիության մասին հայտարարությունները:

Քաղաքացիների կազմած կտակները կարող են ունենալ տարբեր բովանդակություն: Կտակի հիմնական բովանդակությունն են կազմում ժառանգ նշանակելու (քաղաքացիներ, պետություն, իրավաբանական անձինք և այլ կազմակերպություններ), նրանց միջև գույքի բաշխման կարգի և ժառանգների կողմից այլ հանձնարարություններ կատարելու մասին կարգադրությունները: ՀՀ օրենսդրությունը դրանցից առանձնացնում է ժառանգի ենթանշանակումը, կտակակատարի նշանակումը, կտակային հրաժարականը: Ամեն դեպքում կտակը չպետք է պարունակի օրենքին հակասող, օրենքը շրջանցող կամ պետությանը վնասող կարգադրություններ: Կտակային կարգադրությունների օրինականության ստուգումը հանձնարարված է կտակը վավերացնող պաշտոնատար անձին:

Փաստորեն, կտակի ազատությունը կտակարարին թույլ է տալիս սեփական հայեցողությամբ, առանց հաշվի նստելու ամենամոտ ազգականների հետ, նշանակել ժառանգ: Կտակի ազատությունը համապատասխանում է ազատ մրցակցության վրա հիմնված հասարակությանը: Մասնավոր սեփականատերը կարող է իր կազմած կտակով ոչինչ չթողնել իր ընտանիքին: Այստեղից էլ առաջանում են կտակի ազատության սահմանափակման փորձերը՝ կտակի ազատության սկզբունքի (իր հայեցողությամբ տնօրինել իր ունեցվածքը) և այդ սկզբունքի սահմանափակման (պարտադիր բաժնի ինստիտուտը) փոխզիջման ճանապարհով: Ընդ որում՝ դա ունի ոչ միայն նյութական, այլև մարդասիրական մեծ նշանակություն, բխում է անչափահաս և անաշխատունակ անձանց շահերից: Այսինքն՝ կտակի ազատությունը որոշակիորեն սահմանափակվում է, ընդ որում, սահմանափակման ձևերը ևս տարբեր երկրներում տարբեր են:

Ռոմանական իրավունքի երկրներում (Ֆրանսիա, Իտալիա, Շվեյցարիա, Ճապոնիա) գործում է «ռեզերվի» համակարգը, ըստ որի, ժառանգատուն կարող է տնօրինել միայն ժառանգության «ազատ բաժինը», իսկ «ռեզերվը» ենթակա է բաշխման կտակարարի մերձավոր ազգականների միջև: Գերմանիայում գործում է պարտադիր բաժնի իրավունքը, իսկ ԱՄՆ-ում կտակի ազատությունը, որպես կանոն, սահմանափակվում է միայն ի շահ կենդանի մնացած ամուսնու: Անգլիայում կենդանի մնացած ամուսինը, ժառանգատուի անչափահաս և անաշխատունակ երեխաները իրավունք ունեն պահանջելու դատարանից իրենց օգտին ժառանգության հաշվին ալիմենտներ նշանակել:

ՀՀ-ում կտակի ազատությունը սահմանափակվում է միայն ժառանգության պարտադիր բաժնի վերաբերյալ կանոններով: «Պարտադիր բաժին» հասկացությունն առաջացել է հին հռոմեական դատական պրակտիկայի ընթացքում, դա ժառանգական գույքում այն բաժինն է, որից պարտադիր ժառանգները չեն կարող զրկվել կտակի

ուժով: Պարտադիր ժառանգների և նրանց հասանելիք պարտադիր բաժնի չափը որոշվում են օրենքով: Օրենքն, ասես, ուղղում է կտակարարին, որն այս կամ այն պատճառով անչափահաս կամ անաշխատունակ ժառանգներին չի տվել ըստ օրենքի հասանելիք բաժինը: ՀՀ Քաղաքացիական օրենսգրքը որպես պարտադիր բաժին է սահմանում այն բաժնի առնվազն կեսը, որը կհասնեք ժառանգին ըստ օրենքի ժառանգման դեպքում: Այն կտակը, որը պարտադիր ժառանգներից մեկին գրկում է ժառանգությունից կամ նրան ժառանգություն է թողնում պակաս չափով, համապատասխան մասով ճանաչվում է անվավեր: Կտակը վավերացնելիս նոտարը պարտավոր է կտակարարին պարզաբանել ժառանգության պարտադիր բաժնի իրավունքը:

Այսօր կտակի ինստիտուտը քաղաքակիրթ աշխարհում մեծ տարածում ունի: Այն հատկապես կիրառելի է արևմուտքի զարգացած երկրներում, քանզի իր բնույթով լիովին համապատասխանում է ազատ շուկայական հարաբերություններին և դրա անբաժան մաս կազմող մասնավոր սեփականության բովանդակությանը: Մասնավոր սեփականատիրական հարաբերություններում ամեն մարդ ազատ է իրեն պատկանող գույքի հետ իր հայեցողությամբ վարվել ինչպես կենդանության օրոք, այնպես էլ մահից հետո: Կապիտալիստական երկրներում սեփականումը հանդիսանում է սեփականության ձեռքբերման անհրաժեշտ գլխավոր ձևը: Բացի այդ՝ կտակը նվազագույնի է հասցնում հնարավոր վեճերը և տարածայնությունները ժառանգատուի ենթադրյալ ժառանգների միջև, քանի որ, կամ քե սկսեմ, նրանք պետք է հետևեն կտակարարի կամքին, իհարկե, եթե այն օրինական է և չի հակասում օրենքին: ՀՀ օրենսդրությունը, պայմանավորված կտակի անհատական բնույթով, արգելում է ինչպես համատեղ, այնպես էլ փոխադարձ կտակները: Մինչդեռ առանձին երկրներում (Գերմանիա, Անգլիա, ԱՄՆ) դա թույլատրվում է: Ավելին, Գերմանիայում ոչ միայն թույլատրվում է ամուսինների կողմից համատեղ կտակի կազմումը, այլև ժառանգման մասին պայմանագրի կնքումը, որը կարող է լինել ամուսնական պայմանագրի բաղկացուցիչ մաս:

Քաղաքացիաիրավական հարաբերություններն ավելի ընդգրկում են, և դրանք ավելի դժվար է համակարգման ու օրենսդրական կարգավորման ենթարկելը: Ներկայումս ՀՀ-ն գտնվում է շուկայական հարաբերությունների հաստատման և զարգացման ճանապարհին, և անընդհատ առաջընթացի պայմաններում, շուկայական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց՝ վերանայման կարիք են գգում նաև ժառանգմանը վերաբերող հարաբերությունները: Մինչդեռ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի ընդունման պահից ի վեր՝ մինչ օրս (1998-2007թթ.) ըստ կտակի ժառանգման գլխում ոչ մի փոփոխություն կամ լրացում չի արվել: Սակայն նոր տնտեսական հարաբերությունների ձևավորման անհրաժեշտ ուղարկություն է պահանջում ժառանգման իրավունքի և հատկապես կտակի ինստիտուտի նկատմամբ: Հաշվի առնելով այս ամենը՝ մեր օրենսդիրը պետք է ավելի մեծ ուղարկություն դարձնի կտակի ինստիտուտին՝ գործող օրենսդրությունը համապատասխանեցնելով մշտապես զարգացող հասարակարգին:

Ըստ կտակի ժառանգմանը վերաբերող նորմերը իրենց բնույթով ավելի բազմաբովանդակ են, իրենց դիսպոզիտիվ կառուցվածքով հնարավորություն են տալիս քաղաքացուն շեղվել օրենքով սահմանված կանոններից և իր մահից հետո իր ունեցվածքի տնօրինման հարցը որոշել ինքնուրույն: Այսինքն՝ կտակի միջոցով քաղաքացին արտահայտում է իր վերջին կամքը (գույքային և ոչ գույքային բնույթի), որի իրականացման համար, սակայն, անհրաժեշտ են կայուն երաշխիքներ, գործող օրենսդրության մշակում և կատարելագործում:



ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության ներկայացրած տվյալների հիման վրա 2007թ.-ի օգոստոս, սեպտեմբեր, հոկտեմբեր ամիսներին հանրապետությունում գրանցված ծննդյան, մահվան, ամուսնության, ամուսնալուծության, հայրության որոշման և որդեգրման քանակի վերաբերյալ:

	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր
Ծնունդ	3950	3556	4130
Մահ	1982	1770	2022
Ամուսնություն	1021	1426	1631
Ամուսնալուծություն	263	273	292
Հայրության որոշում	1346	1076	1218
Որդեգրում	13	20	16

ՏԵՂԵԿԱՆԵ

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պահվող հատուկ քանակակազմի վերաբերյալ 2007թ.-ի սեպտեմբեր ամսվա դրությամբ:

ՀՀ ԱՆ ՔԿՀ-ն անվանումը	Ընդհանուր քանակակազմը	Այդ թվում կալանավորների թիվը
«Նուբարաշեն» ՔԿՀ	790	327
«Երևան-Կենտրոն» ՔԿՀ	34	31
«Արթիկ» ՔԿՀ	286	24
«Վանաձոր» ՔԿՀ	162	47
«Վարդաշեն» ՔԿՀ	140	45
«Գորիս» ՔԿՀ	170	33
«Աբովյան» ՔԿՀ	186	46
«Էրեբունի» ՔԿՀ	488	0
«Սևան» ՔԿՀ	429	0
«Կոշ» ՔԿՀ	538	0
«Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ	213	20
«Մեղրի» ՔԿՀ	26	0

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում ներկայումս պահվում են 3462 անձինք, որոնցից՝ 127 կին և 54 անչափահաս, որոնցից՝ «Աբովյան» ՔԿՀ-ի կալանավորված անձանց պահելու վայրում՝ 28 կին և 18 անչափահաս կալանավորված անձինք, «Աբովյան» ՔԿՀ-ի ուղղիչ հիմնարկում՝ 28 կին և 18 անչափահաս կալանավորված անձինք: ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պահվում են 24 օտարերկրյա և 38 ԱՊՀ քաղաքացի հանդիսացող անձինք: ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պահվում են թվով 75 ցմահ ազատազրկման դատապարտված անձինք, որից Նուբարաշեն ՔԿՀ-ում՝ 73 անձինք, որից երեքի դատավճիռները օրինական ուժ չեն ստացել, իսկ «Երևան-Կենտրոն» ՔԿՀ-ում պահվում են 2 ցմահ ազատազրկման դատապարտված անձինք:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարարության ԴԱՀԿ ծառայությունում 2007 թվականի երրորդ եռամսյակում քաղաքացիների ընդունելության և նրանց դիմումների, բողոքների, առաջարկությունների և քննարկումների վերաբերյալ:

1. Ստացվել են նամակներ ընդամենը 3390, որից՝

- առաջարկություն - 471,
- դիմում - 2444,
- բողոք - 475

այդ թվում՝

- կրկնակի - 190,
- կոլեկտիվ - 13:

2. Վերցված է վերահսկողության ընդամենը 542, որից՝

- դիմում - 200,
- բողոք - 342:

3. Ըստ հարցի բնույթի.

- գյուղատնտեսական - 1,
- քաղ. և որդեգրման հաշվառման - 1,
- սեփականաշնորհում - 7,
- կոմունալ-կենցաղային - 10,
- կենսաթոշակային - 21,
- շինարարական - 87,
- աշխ. և աշխատավարձ - 183,
- բնակարանային - 228,
- ապարատային - 273,
- այլ հարցեր - 889,
- ֆինանսական - 1690*:

* Վիճակագրական տվյալները բերված են ՀՀ արդարադատության նախարարության պաշտոնական վեբ կայքից.
www.moj.am

ԱՆՐԱՃԵՑ Է ԲԱՐԵՓՈՒՆԵԼ ԻՃԽԱՆՈՒԹՅԱՆ ԲՈԼՈՐ ԵՐԵՔ ՃՅՈՒԴԵՐՈՒՆ՝ ԱՌԱՋԻՆ ՇԵՐԹԻՆ ԱՊԱՆՈՎԵԼՈՎ ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆ ԱՆԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՓՈՐՁԵԼՈՎ ՎԵՐԱՑՆԵԼ ԿՈՌՈՒՊՑԻԱՆ

ՊԱՐԳԵՎ ՕՇԱՆՅԱՆ

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի նախկին դատավոր, իրավագիտության թեկնածու

- Պարոն Օհանյան, ի՞նչ վիճակում է գտնվում այսօր ՀՀ արդարադատության համակարգը:

- Չեմ կարող ասել, որ համակարգը լավ վիճակում է գտնվում, թեև, ինչ խոսք, բավականին գործ արված է՝ համեմատած նախկին խորհրդային դատական համակարգի: Կարծում եմ՝ անելիք շատ կա, և առաջին հերթին պետք է ապահովել դատական համակարգի անկախությունը: Այդ անկախությունն ապահովող պետք է իր բարձրության վրա լինի և ապահովի անկախությունը՝ դրսևորելով քաղաքական կամք: Միայն դրանից հետո կարելի է խոսել արդարադատության, կոռուպցիայի դեմ պայքարի և այլ բարեփոխումների մասին:

- Իսկ ի՞նչ խնդիրներ եք այսօր տեսնում, որոնք ունեն ռեալ լուծում, որոնք պահանջում են բարեփոխումներ:

- Կարծում եմ՝ արտաքին կողմի ապահովման առումով արդեն բավականին բան արված է: Արդեն կամաց-կամաց ունենում ենք հրաշալի շենքային, աշխատանքային պայմաններ, այս կամ այն չափով իհարկե: Օրինակ՝ Կենտրոնի դատարանը ապահովված չէ բավարար չափով դահլիճներով, ինչը քիչ դեր չի խաղում. դատավորները հերթափոխով են աշխատում: Բայց խոսենք ավելի լուրջ բաների մասին: Ստեղծվում են մասնագիտացված դատարաններ, վարչական դատարաններ: Ես դրան կողմ եմ եղել շատ վաղուց: Շատ երկրներում նույնիսկ ընտրությունների վեճերը լսող դատարաններ կան, օրինակ՝ Մեքսիկայում: Գուցե մեր պայմաններում դրա անհրաժեշտությունը այդքան էլ չկա: Դատավորներն էլ վատը չեն: Ընտրվում են փորձառու իրավաբաններ դատախազության, փաստաբանական համակարգից: Թեև, ի դեպ ասեմ, որ փաստաբաններից, կարծես թե, ավելի քիչ են ընտրվում, որը ճիշտ չէ: Ամբողջ աշխարհում ընդունված է, որ բուհն ավարտողը նախ աշխատում է դատախազության համակարգում (չէի ասի որովհետև դա ամենահեշտն է, հավանաբար ավելի հեշտ է մեղադրելը, կամ գուցե պետական կառույց է և սկզբում ավելի հեշտ է պետական երաշխիքներով երաշխավորված լինելը, և հետո միայն անկախ մարմնի կողմից, ինչպիսին փաստաբանական համակարգն է), հետո՝ որպես փաստաբան, հետո միայն՝ դատավոր: Մեզ մոտ ինչ-որ աղավաղում կա՝ դատախազությունից միանգամից անցնում են դատական համակարգ. թեև ինքս էլ այդպես եմ նշանակվել դատավոր: Կարծում եմ՝ ճիշտ կլինի, եթե դատախազության համակարգից անցնեն փաստաբանական համակարգ և հետո միայն դառնան դատավոր: Բայց, քանի որ մենք հավակնոտ հասարակություն ենք ձևավորել, ստացվում է, որ ոչ մի դատախազ չի ուզեցա երբեք դառնալ փաստաբան, առավել ևս, երբ այդ ինստիտուտը բավականին արժեգրված է, թեև շատ լավ փաստաբաններ կան, որոնց շնորհիվ գնում է հակառակ գործընթացը:

Մասնագիտական մի կարծիք էլ արտահայտեմ. ստեղծվեց ՀԿԳ քննչական մարմինը: Ես այն կարծիքին եմ, որ ժամանակն է, որ նախաքննություն և հետաքննություն հասկացությունները փոխարինվեն մեկ հասկացությամբ՝ քրեական հետապնդում



իրականացնող, ինչը արդեն առկա է տեսության մեջ: Օրենսգրքում նախաքննություն բառը չկա, սակայն հին ինտերցիայով օգտագործում ենք: Հետաքննության մարմինները, որոնք կոչված են հանցագործությունները բացահայտելուն, կանխարգելելուն, մի կողմ են քաշվում, երբ քննիչը մտնում է վարույթ, իսկ երբ նրանք են գործում՝ քննիչը անելիք չունի: Չնայած է նրանց համագործակցությունը: Իմ կարծիքով իրավական պետություն կառուցելու համար ավելի արդյունավետ է ամերիկյան կամ եվրոպական համակարգը. քրեական հետապնդման մարմինը, որտեղ քննիչ չկա, ինքն է հարցումներ անում, բացահայտում, մի երկու կարևոր վկայի քննում, կազմում է արձանագրություն և ուղարկում դատարան: Արդյունքում շահում են ժամանակը, շահում են կողմերը: Իսկ իրական ապացույցների վերլուծությունն ու գնահատումը կատարվում է դատարանում: Իսկ մեր դեպքում դատախազությունը ինչ-որ չափով արդարադատություն իրականացնող է դարձել, որովհետև ինքն է գնահատում՝ այս կամ այն ապացույցը բավարար է, թե՛ ոչ, պետք է կարճել և այլն: Սա կարևոր է, քանի որ, եթե ուզում ենք քրեական գործի ընթացքը բերել ամերիկյան կամ եվրոպական մակարդակների, պետք է կարողանանք արագ և օպերատիվ աշխատել: Ի դեպ օրենքն այդպես էլ ասում է՝ հետախուզության մարմինը պետք է արագ բացահայտի և գործը հանձնի քննիչին, մա էլ արագ քննի՝ ուղարկի դատարան: Իսկ այստեղ այդ ամենը ամիսներ է տևում: Չկա հստակ, ճիշտ, օպերատիվ համակարգ: Անելիք շատ կա, և բարդ բան չկա, պետք է միայն ցանկություն, մի փոքր հնարամտություն և փորձ, որը մենք, իհարկե, ունենք:

Վերադառնալով ձեր հարցին՝ նորից պիտի կրկնեմ, որ արտաքին կողմը չէ կարևորը, այլ՝ էությունը, որը ապահովելու համար շատ բան կա անելու: Պետք է դրսևորվի քաղաքական կամք, ցանկություն՝ տեսնելու դատական իշխանությունը անկախ, իրապես անկախ, ոչ թե ձևականորեն, ստեղծելու հնարավոր նախապայմաններ կոռուպցիայից հեռու պահելու դատավորներին, որից հետո հնարավոր կլինի խոսել մնացած, ավելի ոչ էական բարեփոխումների մասին:

- Իսկ ըստ Ձեզ, եթե Հայաստանում անձի իրավունքները խախտված են, կարո՞ղ է նա ապավինել մեր այսօրվա դատական համակարգին:

- Ցավոք, ոչ մեծ չափով, կամ, համեմայնդեպս, չերաշխավորված: Մարդիկ դիմում են, որովհետև

ճար չունեն, այլ տեղ դիմելու հնարավորություն չունեն, բայց դիմում են անհույս: Եվ եթե ինչ որ արդյունքի են հասնում, ապա իրենց համար դա երևի հրաշք է լինում, մի հայտնագործություն, իսկապես մի բերկրանք: Մինչդեռ դա պետք է լինի սովորական: Չէի ուզի անհամեստաբար բերել իմ օրինակը, սակայն Ռոյալ Արմենիայի գործը դառավ մի ֆանտաստիկ բան, երբ դատավոր նման բան արեց: Մինչդեռ դատավորները բոլորը պիտի նման բան անեին, և, ընդհակառակը, դատավորի վատ բան անելուց պիտի աղմուկ բարձրանար մինչև ՄԱԿ և այլն: Բայց մեզ մոտ հակառակն է:

- *Իսկ Ձեր պրակտիկայում եղե՞լ են, և եթե այո, ապա որքան, արդարացման դատավճիռներ:*

- Եղել են: Եթե ամբողջ գործն է արդարացվել, ապա, կարծեմ, երեք: Բայց, եղել է, որ հինգ հողվածով մեղադրվողը դատապարտվել է միայն մեկ հողվածով: Լինսի հիմնադրամի հետ կապված գործով Արամ Կարապետյանը դատապարտվեց միայն մեկ հողվածով, չորս հողվածով ես նրան ճանաչեցի անմեղ, արդարացրեցի: Նման գործեր շատ են եղել: Իսկ ամբողջությամբ արդարացված գործերից առաջինը հասարակական հնչեղություն չստացավ, քերես, ամբաստանյալի անձի պատճառով: Վաթսուհիինգամյա մարդը մեղադրվում էր բռնաբարության փորձ կատարելու մեջ և նախաքննության ժամանակ անգամ փորձաքննություն չէր նշանակվել նրա սեռական ունակությունը ստուգելու համար, այն դեպքում, երբ ինքը առաջին օրվանից հայտարարել էր, որ ունակ չէ: Իսկ դատարանում նշանակված երկու փորձաքննությունները հաստատեցին նրա սեռական անընդունակությունը և նա արդարացվեց: Իսկ Վերաքննիչ դատարանը բեկանեց և յոթ տարվա ազատազրկման դատապարտեց նրան՝ հիմք ընդունելով ինչ-որ ցուցմունքներ: Մա միանշանակ համարում են միայն և կարծում են, որ լիարժեք արդարացման էր ենթակա:

Հաջորդը մեկ տարի առաջ նորից հասարակական հնչեղություն ստացած գործն էր Վարդան Թեյմուրազյանի վերաբերյալ, որը պետավտոտեսուչների հետ ունեցել էր ընթացում: Ես նրան արդարացրեցի և քրեական հետապնդում հարուցելու միջնորդությամբ դիմեցի գլխավոր դատախազին, այդ դատավճիռը մնաց ուժի մեջ, սակայն պետավտոտեսուչների նկատմամբ քր.գործ հարուցելու մասով, կարծեմ, փոփոխվեց: Երրորդը արդեն ձեզ հայտնի Ռոյալ Արմենիայի գործն է:

- *Որքանով է այսօր Հայաստանում հնարավոր լինել անկախ, անկաշառ և արդար դատավոր և արդյո՞ք դուք Ձեզ համարում եք այդպիսինը՝ հաշվի առնելով բոլոր գործունները, որ դուք նշեցիք:*

- Հայաստանում հիմա շատ դժվար է լինել և անկախ, և արդար և անկաշառ, որովհետև, այո, դրա համար ստեղծված չեն այն օբյեկտիվ պայմանները, որոնց մասին խոսեցի: Եվ ես ինքս էլ ինձ այդպիսինը լիարժեք չեմ կարող համարել, այսինքն՝ չէի կարող համարել, որովհետև անկախ քեզնից դու այդ համակարգի մի մասն ես և անկախ քեզնից այդ համակարգը իր ազդեցությունը թողնում է քեզ վրա: Որքան էլ, որ ուզենաս անկախ լինել, երբեմն լիարժեք անկախ չես, այս կամ այն չափով կատարում ես, հուսով եմ՝ խղճին ոչ դեմ պատվերներ, և նույն չափով մյուս հանգամանքներն են խախտում: Որպեսզի վերանան այդ հանգամանքները, անհրաժեշտ են շատ գործուններ, կամք, ցանկություն նախ՝ վերևներից, երկրորդ՝ սոցիալական խնդրի լուծում, այսինքն՝ դատավորների աշխատավարձի բավարար չափով ապահովում, հետո նաև անհրաժեշտ հսկողություն: Թեև պետք է լինի նաև վստահություն (դատավորը պետք է լինի նաև վստահելի), որից հետո նոր կարելի է խոսել արդարադատության իրականացնելու մասին:

- *Իսկ որո՞նք էին, ըստ Ձեզ, Ձեր լիազորությունների դադարման հիմնական պատճառները:*

- Եթե ձեր հարցը վերաբերում է արդարադատության խորհրդում տեղի ունեցած գործընթացին, ապա, անկեղծ ասած, մինչև հիմա ես նույնիսկ որոշմանը չեմ ծանոթացել, որովհետև նախ՝ ինձ չի էլ ուղարկվել, միայն մեր կողմից հետաքրքրվելուց հետո: Այն շատ ծավալուն է և ամեն ինչից երևում է, որ ջանք չեն խնայել փորձելու համար հիմնավորել ոչ միայն խախտումները, այլ դրանց ակնհայտ ու կոպիտ լինելը: Թե որքանով է դա նրանց հաջողվել, չգիտեմ, քանի որ չեմ ծանոթացել, չեմ էլ ուզում ծանոթանալ, քանի որ դա ինձ համար լինելու է սոհաճ: Որովհետև կարծում եմ, և բոլորի համար էլ պարզ է, որ դա չէր լինի, եթե չլիներ Ռոյալ Արմենիայի գործով իմ կայացրած արդարացման դատավճիռը: Որքան էլ տգեղ հնչի, պետք է ասեմ, որ այդպիսի՞ խախտումներ են, որ տեղի են ունենում և չեն արձանագրվում, շեշտվում: Ես այդ մասին արդարադատության խորհրդի իմ ելույթում նշեցի, որ իմ որպես դատավորի, հիմա էլ որպես նախկին դատավորի կամ որպես մարդու արժանապատվությունից շատ ցածր կհամարեմ անդադարանալ այդ ճղճիմ խախտումներին և փորձեմ ապացուցել, որ դրանք անգամ խախտումներ էլ չեն, որը հիմնականում չի բացառվում, թեև համեստորեն ասեմ, որ նաև չի բացառվում, որ այդ խախտումները իրականում տեղ են գտել: Բայց դրանք ակնհայտորեն կարող է կոպիտ և ակնհայտ չեն. համենայնդեպս որևէ մեկով հետևանք չի առաջացել:

- *Կուզենայի՞ք նշել որևէ բան, որ չարծարծվեց հարցազրույցի շրջանակներում:*

- Գուցե, թեև ճառեր ասելը իմ նախասիրությունը չէ, բայց ինձ ստիպեցին, դարձրին ճառ ասող: Ես խնդրեցի, որ ինձ չհերոսացնեն՝ հերոսացրին, ուզեցի ապացուցել, որ ընդամենը իմ գործն են արել՝ պարզվեց իմ գործը չեն արել, ինչ որ ուրիշ, արտառոց բան են արել: Շատ բան պիտի փոխվի, միայն դատական համակարգը չես կարող փոխել, անհնար է միայն իշխանության մեկ ճյուղը փոխել ու դրանով ինչ որ բան լինի: Իշխանության երեք ճյուղերը նման են մի օրգանիզմի, որը բաղկացած է մարմնից, հոգուց և մտքից: Պատկերացրեք՝ արանից մեկը չլինի: Կամ կլինի անհոգի մարմին, կամ անուղեղ մարմին. մարմինը, ի դեպ, գործադիր իշխանությունն է: Հետևաբար անհրաժեշտ է բարեփոխել իշխանության բոլոր երեք ճյուղերը՝ առաջին հերթին ապահովելով դրանց իրական անկախությունը և փորձելով վերացնել կոռուպցիան: Շատերը կոռուպցիա ասելով միայն կաշառակերությունն են հասկանում: Բառարաններից մեկում կոռուպցիա բառի բացատրությունը սրվում է հետևյալ կերպ՝ կոռուպցիա - подкуп, продажность должностных и общественных лиц: Եթե փորձենք քարզմանը՝ ծախվածություն: Ի՞նչ է նշանակում ծախվածություն: Արդեն պարզ է, որ միայն կաշառակերությունը շատ քիչ է արտահայտում այդ բառի իմաստը: Կաշառակերությունն էլ է ծախվածություն, որովհետև քեզ առնում են, դու այդպիսով ծախվում ես և կատարում որևէ մեկի օգտին գործողություն: Որպես կոռուպցիայի դասական օրինակ կնշեի այն, երբ պաշտոնատար անձը և անօրինական գործունեություն ծավալված գործարարը սերտաճում են և մեկը մյուսին տանիք է դառնում, մյուսն էլ իրականացնում է իր անօրինական գործողությունը:

ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՎԱՍԱԽԻՐ ԻՐԱՎԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿԱՐԱԳԻՐՆ ՈՒ ԱՌԱՋՆԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ցանկացած իրավական երևույթ սոցիալական ոլորտի հետ հարաբերակցվում է մի քանի մակարդակով. նախ՝ սոցիալական գործոններն են կանխորոշում այն շահերը, որոնք պետք է ենթարկվեն իրավական պաշտպանության, ապա՝ դրանց իրավական պաշտպանության արդյունքում նույն սոցիալական ոլորտը կրում է որակական փոփոխություններ և միաժամանակ իր կնիքն է դնում իրավական զարգացումների ուղղվածության բովանդակային հատկեցման գործընթացների վրա:

Սնանկության ինստիտուտը, ենթարկվելով զարգացման ընդհանուր օրինաչափություններին, անցել է երկարատև ուղի՝ պատմական ընթացքի ամեն մի փուլում արտացոլելով սոցիալ-տնտեսական կացութաձևի ու գաղափարական արժեքների համապատասխան մակարդակը:

Միայն զարգացած տնտեսական հարաբերությունների առկայությունն է պայմանավորել այնպիսի նյութական և դատավարական նորմերի առաջացումը, որոնք իրենց ամբողջությամբ մեջ կազմում են սնանկության ինստիտուտը՝ որպես պարտապանի և պարտատիրոջ հարաբերությունները կարգավորող առանձին իրավական միավոր:

Մինչև 20-րդ դարի 50-ական թվականները աշխարհում գործում էին սնանկության երկու մոդելներ՝ ա) անգլոսաքսոնական, որն առավելապես ուղղված էր պարտատերերի շահերի պաշտպանությանը, բ) ամերիկյան, որն ուղղված էր պարտապանի շահերի պաշտպանությանը: Այսօր արդեն իսկ գործում են սնանկության հինգ մոդելներ՝ ծայրահեղ պրոպարտապանական, ծայրահեղ պրոպարտատիրական, սրանց միջանկյալ տարբերակները և չեզոք մոդելը:

Եվրոպական միության շրջանակում մարդկանց և կապիտալի ազատ տեղաշարժը, տնտեսական կապերի ընդլայնումը և վերևում արդեն իսկ ընդգծված մի շարք հանգամանքներ պայմանավորեցին սնանկության ինստիտուտի որոշակի տարրերին միջազգային իրավական կարգավորում տալը: Ավաճի համատեքստում ընդունված ակտերից են ՅՈՒՆԵՍԿՈՒ-ի կողմից 1997 թվականի Անդրսահմանային սնանկության մասին տիպային օրենքը, Եվրոմիության 1995 թվականի հունիսի 5-ին Ստամբուլում ընդունված «Սնանկության որոշ միջազգային հարցերի մասին» Եվրոպական կոնվենցիան:

Սնանկության մասին օրենքությունը հետխորհրդային Հայաստանի օրենսդրության առավել արագ փոփոխություններ կրող և զարգացող ինստիտուտներից մեկն է: Ցարական Ռուսաստանի մասը հանդիսացող Հայաստանը սնանկության կարգավորման սեփական իրավական տարբերակ չի ունեցել, իսկ 1917 թվականից հետո սնանկությունը՝ որպես քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում տնտեսվարող սուբյեկտների հարաբերությունների կարգավորման առանձին ձև, խորհրդային կարգերի համար, բնականաբար, դարձավ ոչ պիտանի: 1991 թվականին ԽՍՀՄ փլուզումից հետո սկսվեց նաև այս ոլորտի համար իրավական կարգավորման ճիշտ ու արդարացված մոդելների փնտրտուքը, որի հետևանքը 1995, 1996, 2003 և 2006 թվականներին ընդունված օրենքներն էին: 1995 թվականի հունիսի 15-ի «Ձեռնարկությունների և անհատ ձեռներեցների սնանկացման մասին» ՀՀ օրենքն առաջին փորձն էր, որը հստակ դատավարական ընթացակարգեր չունենալու և մի շարք այլ թերությունների հետևանքով կիրառություն չունեցավ: Հետևանքն եղավ այն, որ մեկուկես տարի անց՝ 1996 թվականի դեկտեմբերի 3-ին ընդունվեց նոր օրենք՝ «Իրավաբանական անձանց, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների և անհատ ձեռներեցների անվճարունակության (սնանկացման) և ֆինանսական առողջացման մասին» ՀՀ օրենքը: Այս օրենքն ավելի էր համապատասխանում տնտեսական զարգացման հեռանկարներին, մանրամասն կարգավորում էր սնանկության ընթացակարգերը: Օրենքն որոշակիորեն հաշվի էր առնում նաև անցումային ժամանակաշրջանի առանձնահատկությունները, մասնավորապես՝ կապված սեփականաշնորհման ենթակա կազմակերպությունների սնանկացման վարույթի հետ: 2003 թվականի դեկտեմբերի 17-ի «Անվճարունակության (սնանկության) մասին» ՀՀ օրենքը նշված օրենքներից որակապես տարբերվում է, սակայն այն ևս ուներ մի շարք թերություններ: Բոլորովին վերջերս՝ 2006 թվականի դեկտեմբերի 25-ին ընդունվեց «Սնանկության մասին» ՀՀ նոր օրենքը (այսուհետև՝ Օրենք):



Եվրոպական միության շրջանակում արդյունքում, սակայն, այսօր մեր հանրապետությունում գործող, սնանկության իրավահարաբերությունները կարգավորող իրավական նորմերը իրենց ամբողջականության մեջ չեն ձևավորում մեկ միասնական իրավական հայեցակարգ ներկայացնող մոդել, չունեն հանրության սոցիալական պաշտպանություն իրականացման համար անհրաժեշտ ծանրաբեռնվածություն, այս ոլորտում առաջացող հարաբերությունները կարգավորվում են ոչ լիարժեք, ինչն անխուսափելիորեն հանգեցնում է բացասական հետևանքների քաղաքացիական շրջանառության մեջ ներգրավված բոլոր անձանց, հետևաբար նաև՝ ողջ հասարակության և պետության համար:

Սնանկությունը դատարանի կողմից հաստատված պարտապանի անկարողությունն է ամբողջությամբ բավարարելու դրամական պարտավորություններով իր պարտատերերի պահանջները կամ կատարելու պարտադիր վճարումներով իր պարտականությունները՝ օրենքով նախատեսված ժամկետներում:

ՀՀ-ում որպես սնանկության արտաքին հատկանիշ նախատեսվում է նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկը (500.000 դրամ) գերազանցող դրամական պարտավորությունների կատարման 30-օրյա ժամկետով կետանցը: Բնարկներն այսպիսի չափանիշների ընտրության հիմնավորվածությունը: Կարծում ենք, որ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկը գերազանցող դրամական պարտավորությունները 30-օրյա ժամկետում մանր ձեռնարկատիրոջը սնանկ ճանաչելը գուցե և տրամաբանական է, բայց մեծածավալ և բազմակողմանի տնտեսական գործունեություն ծավալող, մի քանի հարյուր բաժնետեր ունեցող ընկերության համար՝ ոչ պիտանի: Վերջինս կարող է որոշակի մակրոտնտեսական նպատակների հասնելու համար վարել այնպիսի քաղաքականություն, որ նման մասշտաբների վճարումների կատարումն ընդհատելը և դրա համար գույքային պատասխանատվություն կրելը լինի նրա համար շատ ավելի ձեռնտու, քան պարտականությունները ժամանակին կատարելը: Բնականաբար, նման պարագայում սնանկության վարույթ հարուցելու համար դատարան դիմելը բացասաբար կանդրադառնա տվյալ իրավաբանական անձի հեղինակության վրա, որն էլ իր հերթին կարող է հանգեցնել արտադրական խոշոր վնասների: Սակայն չպետք է մոռանալ նաև քաղաքացիական կարգապահության մասին՝ բացառելով կամայականությունների անթույլատրելի դրսևորումները: Այնուամենայնիվ, կարծում ենք, որ տարբերակված մոտեցման կիրառումը կարող է լինել արգասաբեր և ապահովել քաղաքացիական շրջանառության կայունությունը:

Ավելորդ չէր լինի ընդգծել, որ այս՝ արտաքին հատկանիշի կիրառումը պետք է հնարավորություն տա ժամանակին «կռահելու» գործարարության սուբյեկտի փաստացի բացարձակ անվճարունակության վտանգը և ժամանակին ձեռք առնված միջոցառումների շնորհիվ վերականգնելու դրա կենսունակությունը:

Սնանկության բովանդակային հատկանիշի (պարտապանը վճռի կայացման պահին ի վիճակի չէ կատարելու իր ժամկետանց դրամական պարտավորությունները (ենթադրվում է, որ խոսքը պարտավորությունների լրիվ կատարման անհնարինության մասին է) կամ պարտապանի պարտավորությունները գերազանցում են պարտապանի ակտիվների արժեքը) կիրառումը լայն տարածում չունի (Գերմանիա, ՌԴ): ՀՀ-ում Օրենքն այս հատկանիշը պարտադիր կարգով կիրառելի է դարձնում միայն այն դեպքում, երբ սնանկ ճանաչվելու համար դատարան է դիմում հենց ինքը՝ պարտապանը: Հասկանալի է, որ այս դեպքում պարտատանի համար հեշտ է իր գույքի անբավարար լինելը հաստատող փաստեր և տվյալներ ներկայացնելը, որոնք հավաստվում են նրա կողմից ներկայացվող Օրենքի հոդված 13-ով նախատեսված փաստաթղթերով: Պարտատերը ևս կարող է այս հիմքով պարտապանի նկատմամբ սնանկության վարույթ սկսելու նախաձեռնող դառնալ, սակայն նա կարող է կիրառել նաև սնանկության արտաքին հատկանիշը:

Օրենսդրական պարտադիր ամրագրման կարիք ունի այն նաև դրույթը, համաձայն որի, անձը չի կարող սնանկ ճանաչվել և դատարանում սնանկության վերաբերյալ գործ չի կարող քննվել, իսկ դրա քննության ընթացքում բացահայտվելու դեպքում՝ այն ենթակա է կարճման, եթե պարտապանն ունի միայն մեկ պարտատեր: Այս դեպքում պարտապանի նկատմամբ ունեցած դրամական պահանջների վերաբերյալ գործերը ենթակա են քննության և բավարարման քաղաքացիական դատավարության ընդհանուր հայցային վարույթի կարգով: Նշված նորմի բացակայության պատճառով միայն մեկ պարտատիրոջ առկայությամբ սնանկության վերաբերյալ գործերի քննումը դատարանում ուղղակիորեն հակասում է այս ինստիտուտի դերին և նշանակությանը՝ դրանով կարգավորվող հատուկ մեխանիզմների կիրառումը դարձնելով անիմաստ:

Էական բարեփոխումների կարիք ունեն նաև պարտատերերի ժողովի և խորհրդի իրավասությունները: Նշված կառույցներն այսօր սնանկության գործընթացի վրա էական ազդեցություն ունենալ չեն կարող՝ անհրաժեշտ լիազորությունները չունենալու պատճառով: Բացի դրանից՝ պետք է նաև հստակ սահմանազատվի ժողովի և խորհրդի լիազորությունները: Կարծում ենք՝ փոփոխության պետք է ենթարկել նաև խորհրդի ձևավորման կարգը՝ դրա մեջ ընդգրկելով տարբեր կարգավիճակ ունեցող բոլոր պարտատերերին: Պետք է բացառել նաև խորհրդը ստեղծելու արգելքը՝ սահմանելով միայն այն դեպքերը, երբ դրա ստեղծումը պարտադիր է: Որոշակի լրացումների կարիք ունի նաև սնանկության կառավարիչների ենթաինստիտուտը: Մասնավորապես՝ պետք է նախատեսվի դատարանի հնարավորությունը խոշոր տնտեսվարող սուբյեկտների սնանկության դեպքում նշանակելու մեկից ավելի կառավարիչներ, միաժամանակ պետք է կարգավորվի նաև այդ դեպքում նրանց իրավական պատասխանատվության և վարձատրության հարցերը: Անհրաժեշտ է երկարաձգել նաև կառավարչի գործողությունները (անգործությունը) բողոքարկելու ժամկետները՝ դարձնելով ներկայիս տասը օրը երեսուն օր:

Առանձնահատուկ պետք է սահմանվի նաև պարտապանի աշխատողների՝ պարտապանին սնանկ ճանաչելու համար դատարան դիմելու իրավունքը: Պետք է առավելություն տրվի նաև աշխատողների և կյանքին ու առողջությանը պատճառած վնասի համար պարտապանից փոխհատուցում ստացող անձանց պահանջներին՝ դրանք՝ անգամ օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ ներկայացնելու դեպքում ընդգրկելով ոչ թե չսպահովված պահանջների շարքում,

այլ պահանջների բավարարման օրենքով սահմանված այն հերթում, որոնց մեջ դրանք ընդհանրապես ընդգրկվում են:

Այսօր Օրենքով նախատեսված պարտատերերի պահանջների բավարարման կարգը չի համապատասխանում իրավունքի՝ որպես սոցիալական կարգավորչի դերին ու նշանակությանը: Թվում է, այս հարցը այն կարևորագույն խնդիրներից մեկն է, որի վերաբերյալ օրենսդիրը պետք է դրսևորի այլ մոտեցում: Կարծում ենք, որ սպահովված պահանջների (ի դեպ՝ պահանջները ապահովված պետք է համարվեն ոչ միայն գրավի, այլև գույքի պահումի դեպքում) չպետք է բավարարվեն առանձին կարգով, այլ գրավի և պահումի առարկաները պետք է մտցվեն մրցութային զանգվածի մեջ, իրացվեն ընդհանուր կարգով: Ապահովված պարտատերերի պահանջները պետք է բավարարվեն ընդհանուր կարգով՝ պարտապանի աշխատողների և կյանքին կամ առողջությանը պատճառած վնասների համար պարտապանից հատուցում ստացող անձանց պահանջները բավարարելուց հետո միայն: Ի դեպ, կարծում ենք, որ պարտապանի աշխատողները և կյանքին կամ առողջությանը պատճառած վնասների համար պարտապանից հատուցում ստացող անձինք պետք է ընդգրկվեն ոչ թե միայնց հաջորդող, այլ մեկ հերթի շրջանակում՝ սոցիալապես խոցելի այս երկու սուբյեկտների համար էլ սպահովվելով իրավունքների պաշտպանության հավասար հնարավորություններ:

Շատ կարևոր ենք համարում նաև Օրենքով սնանկության ընթացակարգերի հստակ ու խելամիտ ժամկետներ, դրանց հաշվարկման չափանիշներ, իսկ խախտման դեպքում՝ բողոքարկում և համապատասխան պատասխանատվության միջոցների կիրառում նախատեսելը, քանի որ այսօր վերը նշված բացի արդյունքում է, որ հիմնականում խախտվում են սնանկության իրավահարաբերությունների մասնակիցների իրավունքներն ու օրինական շահերը: Սնանկության ինստիտուտի կատարելագործման համար ընդգծելի ենք համարում սնանկության գործն ավարտելու եղանակներից մեկի՝ հաշտության համաձայնության կառուցակարգի ներդրումը և դրա լիարժեք իրավական կարգավորումը:

Օրենքի նորամուծություններից է ֆիզիկական անձանց սնանկության ինստիտուտը: Ֆիզիկական անձի նկատմամբ կիրառվում են մյուս սուբյեկտների սնանկության հետ կապված հարաբերությունները կարգավորող ընդհանուր դրույթները՝ հաշվի առնելով նաև Օրենքով սահմանված առանձնահատկությունները, սակայն, կարծում ենք, որ պարտապան ֆիզիկական անձի սնանկության նկատմամբ պետք է կիրառվի առանձին՝ հատուկ ընթացակարգ: Չի կարելի այս սուբյեկտի սնանկության նկատմամբ կիրառել նույն դրույթները, որոնք որ կիրառվում են գործարարական իրավունքի սուբյեկտների սնանկության դեպքում: Արդարացված չէ նաև ֆիզիկական անձի նկատմամբ այնպիսի ընթացակարգի կիրառումը, ինչպիսին է ֆինանսական առողջացումը՝ դրա նպատակների ու խնդիրների միանգամայն այլ բովանդակության պատճառով: Կարծում ենք՝ ֆիզիկական անձի սնանկության ներկայիս տարբերակը երևույթի մասին տալիս է, այսպես ասած, կիսա-պառ պատկերացում, հետևաբար այն այս ձևով ներդրելն այսօր համարում ենք ոչ այնքան մտածված և հանրապետությունում իրավական մշակույթը ձևավորելու բոլորովին չնպաստող քայլ:

ԱՐՄԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ
Իրավաբան



18-րդ դարի վերջին կյանքից հեռացած գերմանացի բարոն Վինտերստեյմի կտակը անսովոր է նրանով, որ նա խնդրել է իրեն թաղել հինգհարյուրամյա վիթխարի կաղնու փշակում: Նման յուրօրինակ թաղում նա ընտրել է ի նշան բողոքի՝ կնոջ դեմ: Ամուսնական համատեղ կյանքի ողջ ընթացքում վերջինս ամուսնուն հանդիմանել է այն բանի համար, որ անգամ մի թիզ սեփական հող չունի (ինքը՝ բարոնուհին, հարուստ հողատերերի ժառանգ էր): Հաճախակի, հոգնելով հանդիմանանքներից, խեղճ բարոնը առանձնացել է կաղնու փշակում՝ լսելու մեղումների բզզոցը և խորհելու աշխարհի անարդարությունների մասին: Այստեղ էլ միտք է հղացել իշխանություններից գնել կաղնին և այնտեղ գտնել իր վերջին հանգրվանը: Այդպես էլ վարվել են: Փշակը, բարոնի թաղումից հետո, կտակի համաձայն փակվել է երկաթյա սալով, թողնելով փոքր անցք:

Հարյուր տարի անց բեռլինյան լրագրերից մեկում գրված էր, որ նայելով անցքից, կարելի է տեսնել բարոնի գերազանց պահպանված կմախքը:

16-րդ դարի վերջերին Անգլիայում ծխելու համար մահապատժի էին ենթարկում: Ծխողների գլուխները կտրում էին և, ի խրատ մյուսների, ծխամորճերը բերաններին ցուցադրում էին հրապարակներում:

18-րդ դարում ցար Ալեքսեյ Միխայլովիչի օրենսգրքով հրամայվում էր բոլոր նրանց, ում մոտ ծխախոտ գտնվեր, «մտրակով անխնա ծեծ տալ» այնքան ժամանակ, մինչև ծխողները խոստովանեին, թե որտեղից են ծխախոտ ճարել: Ծխախոտի վաճառքի համար հրամայվում էր վաճառականների «առուգերը պատռել ու քթերը կտրել» և արտրել հեռավոր քաղաքներ:

Մեղադրյալը դատապարտվեց երկու տարվա ազատագրկման՝ ժամացույցի գողության համար: Նախքան իրեն տանելը՝ նա իր պաշպանին ասում է.

-Բայց ինչքան ճշտությամբ է կանխատեսել ժամագործը:

-Այսի՞նքն:

-Գողացված ժամացույցի պիտակի վրա գրված է. «Երաշխիքը՝ երկու տարի»:

Հաճախորդ- Դուք չե՞ք վերցնի ձեզ վրա ապահարզանի մասին իմ գործը: Ես հաստատում եմ, որ կինս ինձ դավաճանում է:

Փաստաբան- Դուք ապացույցներ ունե՞ք:

Հաճախորդ- Այո, երեկ նա տուն եկավ շատ ուշ և ասաց, որ այդ ամբողջ ժամանակն անց է կացրել Ալիսայի հետ:

Փաստաբան- Ինչ կա որ: Դա ի՞նչ ապացույց է:

Հաճախորդ- Ամենալուրջ ապացույցն է: Բանը նրանում է, որ այդ երեկը Ալիսայի հետ անց են կացրել ես:

Դատավոր- Մեղադրյալ, ինչպե՞ս ամոք չեք գզում: Այդ կինը ձեզ նվիրել է բուլկի, իսկ դուք նրա պատուհանին նետում եք քար:

- Պարոն դատավոր, դա քար չի եղել:

- Իսկ ի՞նչ էր:

- Բուլկի:

Սահմանի վրա մաքսատան աշխատողը զբոսաշրջիկի իրերը զննելիս ուշադրություն է դարձնում վանդակի վրա, որում թութակ էր.

- Դուք ստիպված եք նրա համար վճարել մեծ տուրք:

- Ինչու՞:

- Օրենքով տուրք չի գանձվում միայն թութակի խրտվիլակի համար:

Ջրոսաշրջիկը բազմամշակ մտածեց: Այդ պահին վանդակից լսվեց թութակի ձայնը:

- Միայն առանց հիմարությունների: Վճարի տուրքը:

Դատավորը հարցնում է կրկնահանգագործին.

- Ինչի՞ համար եք նստել վերջին անգամ:

- Ես ցանկանում էի գլխով հարվածել պատին:

- Բայց չե՞ք որ այդ արարքը պատժելի չէ:

- Ես էլ էի այդպես կարծում, բայց դատավորին դուր չեկավ, որ այդ իմ գլուխը չէր:

Դատավորը հետաքրքրությամբ նայում է փոքրիկին.

- Խոստովանիր, փոքրիկ, որ դու ես ջարդել խանութի պատուհանի ապակին: Եվ իմացիր, անկեղծ խոստովանությունը կիսով չափ թեթևացնում է մեղքը և պատիժը:

Փոքրիկը մտածում է, մտածում և, վերջապես հարցնում.

- Իսկ չի՞ կարելի ընդունել մեղքս կրկնակի:

- Երեկ ես քաջաբար և բացահայտորեն իմ կարծիքն ասացի խուլիգանների խմբին, հայտարարելով, որ նրանք իրենցից ներկայացնում են մոլախոտ, որին հասարակությունը պետք է վերջականապես մաքրի:

- Բրա՛վո, և որտե՞ղ եք դուք այդ ասել նրանց:

- Դատարանի դահլիճում:

Ձեր բողոքը նայվել է կրկնակի: Այստեղ նշվածը բավարարելու համար փաստարկներ չեն գտնում, քանի որ մանրամասն պատասխանը ձեզ տրված է նամակում:

(բողոքի առթիվ տրված պատասխանից)

Գաբրուվցին հարևանին դատի տվեց այն բանի համար, որ նա երեք տարի առաջ յուրացրել է հավը:

- Բայց ինչու՞ դուք դատարան եք դիմում այժմ,- հարցրեց դատավորը:

- Իսկ ուրիշ ինչպե՞ս: Այս երեք տարիներում հավն ինձ համար կածեր հազար ձու, իսկ դրանից ես կստանայի հազար ճուտեր, դրանք ինձ համար կածեին հազարական ձվեր: Իսկ ինչքան ինձ օգուտ կլիներ, եթե այն ժամանակ ես դիմեի դատարան:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

Հեռ.՝ (374 10) 54-01-99

Ֆաքս՝ (374 10) 58-02-99

Էլ.փոստ՝ legalnewsletter@ayla.am

Լրատվական գործունեություն իրականացնող՝

«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ

Հասցե՝ ք. Երևան, Նալբանդյան 7, բն. 2

Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա 057970, տրված՝ 27.12.2002 թ.

Թողարկման պատասխանատու և խմբագիր՝ Նարինե Կարապետյան

«ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ» ՏԱՐԱԾՎՈՒՄ Է ԱՆՎՃԱՐ

Տպաքանակը՝ 1250 օրինակ
Ծավալը՝ 1 տպ. մամուլ
Ստորագրված է տպագրության 28.11.2007թ.

Տպագրվում է 2006թ. հունիսից